


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ,
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ**



**ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(2023-2027թթ.)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է՝ համայնքի ղեկավար՝



Ա.Թամազյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 17-ի N 22-Ն որոշմամբ



Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	4
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	5
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	5
2.2. Ալավերդի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը նկարագրող ցուցանիշներ...	19
2.3. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը.....	36
2.4. Աղետների ռիսկի կառավարում.....	37
2.5. 2023-2027թթ.-ին հիշարժան տարեթվերի, տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ և հուշ-երեկոներ.....	38
2.6. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....	39
2.7. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	40
2.8. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն.....	41
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	43
3.1 Համայնքի զարգացման տեսլական.....	43
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	43
3.3. Համայնքում իրականացվող ծրագրեր.....	45
4. ՀՀ ֆինանսավորում.....	48
5. ՀՀ մոնիթորինգ	

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Ալավերդի համայնքի հարգելի բնակիչներ,

Ձեզ եմ ներկայացնում Ալավերդի համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, որը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համախառնախաճ՝ մշակում է համայնքի ղեկավարը և նրա աշխատակազմը, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

Ալավերդի համայնքի 2023-2027թթ զարգացման ծրագրի կենտրոնում քաղաքացին է և նրա կյանքի որակի բարելավումը, արժանապատիվ կյանքի համար բավարար պայմանների ստեղծումն ու ապահովումը: Ալավերդի խոշորացված համայնքի յուրաքանչյուր բնակավայր ունի ձևավորված ավանդույթներ և իրեն բնորոշ բնութագիր: Դրա հետ մեկտեղ անժխտելի է արդի կյանքին ու աշխարհին ներդաշնակ և համահունչ քայլերու հրամայականը: Կոչված լինելով ապահովելու համայնքի համաչափ և կայուն զարգացումը՝ համայնքի ղեկավարը և ավագանին միաժամանակ պարտավոր են համահունչ քայլեր ձեռնարկել ժամանակի պահանջներին համապատասխան բարելավված համայնքային միջավայր ունենալու համար: Այդ նպատակների իրականացմանն է միտված Ալավերդի համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը: Այն իր մեջ ներառում է համայնքի ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունը, համայնքի ներուժի, ուժեղ և թույլ կողմերի գնահատականը և զարգացման ռազմավարական ուղղությունները:

Այս փաստաթուղթը հիմք է հանդիսանալու առաջիկա բազմաթիվ նախաձեռնությունների, իրագործելի ծրագրերի, տարեկան համայնքային բյուջեների, տարեկան աշխատանքային պլանների կազմման համար, նաև՝ դառնալու մեր աշխատանքի արդյունքների գնահատման չափման միավորը:

Ալավերդի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական նպատակն է իրականացնել ՏԻՄ-երի առաքելությունը՝ բարձրացնել համայնքի բնակիչների կյանքի որակը, բարեկարգել և բարելավել նրանց կենսագործունեության միջավայրը, նպաստել համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորմանը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը, լսելի դարձնելով բոլոր կարծիքները, համայնքի բնական հարստությունը և պատմամշակութային ժառանգությունը ծառայեցնել համայնքի կարիքների բավարարմանը՝ նպաստելով համայնքի ներդրումային գրավչության բարձրացմանն ու բարենպաստ բիզնես-միջավայրի ձևավորմանը: Ալավերդցու շահերից բխող այս բոլոր ծրագրերը իրականացնելու ենք միասին, համատեղ միասնական ջանքերով, փոխադարձ վստահությամբ՝ ի նպաստ համայնքի յուրաքանչյուր բնակչի և հանուն Ալավերդի համայնքի:

Որպես ժողովրդավարական կառույց՝ համայնքապետարանը զարգացման ռազմավարական պլանը մշակել է համայնքի ավագանու անդամների, բնակիչների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրիգի ուղղմերի հետ միասին:

Ես հավատում եմ, որ մեր միասնական և վստահ քայլերով, համախմբվածությամբ, մեր համայնքի նկատմամբ սրտացավ և հոգատար վերաբերմունքով, բարձր պատասխանատվությամբ, ազնիվ աշխատանքի ու նվիրումի շնորհիվ կարող ենք շենացնել մեր համայնքը:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ալավերդին բազմաբնակավայր համայնք է: Ալավերդի համայնքի կազմում ընդգրկված են թվով 28 բնակավայրեր՝ Ալավերդի, Ախթալա, Շամլուղ քաղաքները և Կարմիր Աղեկ, Հագվի, Արդվի, Ամոջ, Արևածագ, Այգեհատ, Ծաթեր, Մղարթ, Օձուն, Նեղոց, Մեծ Այրում, Փոքր Այրում, Ճոճկան, Բենդիկ, Առողջարանին կից, Ախթալա, Ակներ, Աքորի, Կաճաճկուտ, Հաղպատ, Ծաղկաշատ, Զիլիզա, Քարկոփ, Թեղուտ, Շնող գյուղերը:

Համայնքի կենտրոն է հանդիսանում Ալավերդի քաղաքը:

Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին:

ՔԱՂԱՔ ԱԼԱՎԵՐԴԻ

Ալավերդին ՀՀ միջին մեծության քաղաք է, գտնվում է հանրապետության հյուսիսային մասում, մարզկենտրոն Վանաձորից հեռավորությունը 44 կմ է, Երևանից՝ մոտ 167 կմ: Ալավերդի բնակավայրի վարչական տարածքը 6795,82 հա է, տարածվում է Դեբեդ գետի երկու ափերին: Կտրտված ու բարդ ռելիեֆի պատճառով քաղաքի թաղամասերն իրարից բավականին հեռու են: Ռելիեֆին բնորոշ են տարբեր մակարդակի բարձրություններ (750-1400 մ), խիստ մեծ թեքություններ (մինչև 350): Համայնքն ունի բարեխառն ու մեղմ կլիմա՝ պայմանավորված մակերևույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ: Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվում է հուլիս ամսին՝ +30°C, +35 °C, ամենացածրը՝ հունվար, փետրվար ամիսներին՝ - 17-18 °C: Տեղումների քանակը 800 մմ է:

Դեռևս 1960-ականներին համայնքին հարակից 3 գյուղեր՝ Ակները, Սանահինը և Մադանը, համայնքների խոշորացման արդյունքում վարչականորեն մտել են Ալավերդու տարածքի մեջ:

Ալավերդին Հայաստանի հնագույն բնակավայրերից է, աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ: Ալավերդի համայնքի Սանահին գյուղական թաղամասում է գտնվում Սանահինի Վանական համալիրը:

Ալավերդին եղել է բազմաճյուղ տնտեսություն ունեցող արդյունաբերական քաղաք, տնտեսության մեջ առանցքային դեր է խաղացել պղնձի արտադրությունը:

ՔԱՂԱՔ ԱԽԹԱԼԱ

Ախթալա բնակավայրը 1921թ. հուլիսի 20-ի «ՀՍԽՀ վարչական վերաբաժանումների» դեկրետով եղել է Լոռու գավառի Ալավերդի գավառամասի կազմում, 1930թ. սեպտեմբերի 9-ից՝ Ալավերդու վարչական շրջանի կազմում, որը կազմավորվել է Ալավերդու և Դսեղի գավառներից, 1969 թվից՝ Թումանյանի շրջանի կազմում: 1939թ. Ախթալան ունեցել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ, որի ավանային սովետին վարչատարածքային կարգով ենթարկվում էին (1971թ.) Ախթալայի առողջարանը, առողջարանին կից ավանը, Վերին Ախթալա գյուղը, Նեղոց գյուղը, Քարկոփ ավանը: 1995 թվից «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Ախթալա քաղաքատիպ ավանին տրվել է քաղաքի կարգավիճակ Լոռու մարզի կազմում: Այժմ Ախթալայի բնակավայրի կազմում են Ախթալա քաղաքը, Ախթալայի առողջարանը և դրան կից գյուղը՝ վարչական 1889,69 հա տարածքով:

Ախթալա քաղաքը Հայաստանի Հանրապետության գունավոր մետալուրգիայի կենտրոններից մեկն է: Պղնձի, ոսկու, բազմամետաղային հանքանյութերի մշակումը, երբեմն տևական ընդմիջումներով, շարունակվել է միջին դարերում և առավել բարձր զարգացման հասել XVIII դարի II կեսին, երբ 1763թ. Ախթալայի արծաթ-կապարի և 1770թ. Ալավերդու պղնձի հանքավայրերի բազայի վրա կառուցվեցին Ախթալայի արծաթ-կապարի և Ալավերդու, այնուհետև Շամլուղի պղնձաձուլական գործարանները:

1785. և 1795թթ. հանքն ավերվել է և փակվել: Հետագայում այն վերականգնել են հույն հանքափոր վարպետները, որոնք եկել էին Հերակլ II թագավորի օրոք, դեռևս 1760-ական թվականներին: 1887-1914թթ. հանքավայրը շահագործել են ֆրանսիացի ձեռնարկատերերը:

1905թ. դադարեցվել էր Ախթալայի արծաթ-կապարի հանքավայրի մշակումը պաշարների սպառման պատճառով: 1960-1985թթ. ՀՍՍՀ գունավոր մետալուրգիան մեծ առաջընթաց ապրեց: 1967թ. շարք մտավ Ախթալայի հարստացման ֆաբրիկան:

1971-1975թթ. Շամլուղի պղնձի, Ախթալայի արծաթ-կապարի հանքերն ու հարստացուցիչ ֆաբրիկան ընդգրկվեցին Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի կազմի մեջ: Այժմ վերագործարկվել է Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկան:

ՔԱՂԱՔ ՇԱՄԼՈՒԴ

Շամլուղը քաղաքային բնակավայր է ՀՀ Լոռու մարզում, մարզկենտրոնից 69 կմ հյուսիս-արևելք, Կուրի ավազանի Ախթալա գետակի վերին հոսանքի ձախ սարալանջին: Վարչական տարածքը 6481,94 հա է: 18-19-րդ դարերի գրավոր աղբյուրներում հիշատակվում է նաև Շամբլուղ, Շամբլուտ, Շամբուլուտ, Դամբլուղ և այլն:

Հիմնադրվել է 1770 թվականին 1763 թվականին վրաց Հերակլ II թագավորի կողմից Լոռի հրավիրված և Ախթալայում բնակություն հաստատած հույն կապարագործ-հանքագործների կողմից: Վերջիններս համոզվելով որ ցածր է Ախթալայի հանքերում պղնձի և արծաթի պարունակությունը գտնում են նոր հանքավայրեր և տեղափոխվելով 1770 թվականին հիմնում են Մադան(ներկայումս Ալավերդու վարչական կազմում) և Շամլուղ գյուղերը:

19-րդ դարի վերջերին տարածաշրջանի պղնձարտադրությունը կապալով հանձնվեց Ֆրանսիացի արդյունահանողներին, որոնք հսկայական միջոցներ ներդրեցին Ալավերդու և Շամլուղի հանքերի վերակառուցման ու ընդլայնման ուղղությամբ: Ձեռքի աշխատանքը փոխարինվեց մեքենաների աշխատանքով: Տեղի ունեցավ եվրոպացիների ներհոսք, ինչը դրական ազդեցություն ունեցավ բնակավայրի սոցալ կրթական ու մշակութային զարգացման գործում: Խորհրդային տարիներին Շամլուղը բանվորական ավան էր, իսկ 1996 թվականի վարչատարածքային փոփոխության արդյունքում դասվեց քաղաքների շարքը:

Շամլուղը երկար տարիներ ունեցել է բազմազգ բնակչություն՝ հայեր,, վրացիներ, ադրբեջանցիներ, հույներ, ռուսներ, օսեր, իտալացիներ, ուկրաինացիներ, բելոռուսներ և այլն: Ուներ զարգացած կրթամշակութային համակարգ: Գործում էին միջնակարգ դպրոց և մանկապարտեզներ հայերեն-ռուսերեն հոսքերով, կինոթատրոն, մշակույթի պալատ, դիսկոտեկ, գրադարան, ավտոմատ հեռախոսակայան, կապի բաժանմունք, հիվանդանոց:

Շամլուղի և Ախթալայի հանքերը տարբեր ժամանակներում եղել են որպես ինքնուրույն ձեռնարկություններ, սակայն 1970-ական թվականներից միավորվել էին Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի մեջ: 1989 թվականին բնապահպանական շարժման

հետևանքով փակվեց կոմբինատը, փակվեցին նաև հանքերը: Սկսվեց բնակչության արտագաղթը, որին ավելացավ նաև 90-ականներին հույները գաղթը դեպի Հունաստան:

Շամլուղ քաղաքի վարչական կազմի մեջ են մտնում Բենդիկ և Վերին Ախթալա գյուղերը: Վերջինս 1989 թվականին լքվել է ադրբեջանցիների կողմից և ներկայումս գրեթե անմարդաբնակ է: Շամլուղի ազգաբնակչության փոփոխությունը.

ԳՅՈՒՂ ԱՔՈՐԻ

Աքորի գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքի հարավ-արևմուտքում: Ալավերդի քաղաքից հեռավորությունը 5 կմ է:

Գյուղը գտնվում է Լավար լեռան հարավ-արևելյան ստորոտին, սարավանդում՝ ծովի մակարդակից 1050-1100մ բարձրության վրա: Գյուղի վարչական տարածքը 5394,06 հա է: Կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ:

Գյուղի հիմնադրման մասին ստույգ տեղեկատվություն չի պահպանվել, սակայն գյուղի տարածքում գտնվող «Ագեղցի» եկեղեցին, որը կառուցվել է 5-6-րդ դարերում, փաստում է, որ գյուղի տարածքը բնակեցված է եղել այդ դարերից: Գյուղի հարավ-արևելքում է գտնվում Սուրբ Գևորգ եկեղեցին: Գյուղում է տեղակայված նաև Բզավոր եկեղեցին:

Գյուղի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Գյուղի տարածքում մշակվում է հացահատիկ, եգիպտացորեն, կարտոֆիլ և մշակաբույսեր: Այգիները հիմնականում մշակվում են տնամերձ հողամասերում:

ԳՅՈՒՂ ԿԱՃԱՃԿՈՒՏ

Կաճաճկուտ գյուղը գտնվում է Լավար սարի հարավային լանջին՝ Ալավերդի քաղաքից 12 կմ հեռավորության վրա: Գյուղի վարչական տարածքը 4332.85 հա է: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1450-1700 մ բարձրության վրա: Գյուղն ունի պատմական հին արմատներ, որի վկայությունն է գյուղի տարածքում գտնվող Սեդվու Սուրբ նշան եկեղեցին, որը կառուցվել է 12-13-րդ դարերում և նույն տարածքի գերեզմանատունը:

Ձմեռվա տևողությունը, միջին հաշվով, 150 օր է: Ձմեռը մեղմ է, ամառը՝ զով: Տարեկան թափվում են 800-900մմ մթնոլորտային տեղումներ:

Գյուղի բնակելի տարածքը ամբողջությամբ գտնվում է սողանքների լեզվակների վրա, այդ է պատճառը, որ գյուղում կան բազմաթիվ վթարային տներ:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ: Հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվում են տնամերձ հողամասերում, կաթի վերամշակումն իրականացվում է տնային պայմաններում:

ԳՅՈՒՂ ՀԱՂՊԱՏ

Հաղպատ գյուղը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան տարածքում, մարզկենտրոն Վանաձորից հեռավորությունը 60 կմ է: Գյուղի տարածքով է անցնում պետական մայրուղին, որի հետ համայնքը կապված է 5 կմ երկարությամբ ճանապարհով:

Հաղպատը գտնվում է ծովի մակերևույթից 950-1050 մ բարձրության վրա: Արևմտյան կողմից գյուղը երիզված է անդնդախոր ձորերով, իսկ արևելյան կողմից շրջափակված է Սուրբիսև Տերունական սարերով, որոնք բերդ են հանդիսացել ասպատակողների համար:

Հաղպատը որպես բնակավայր թվագրվում է մոտավորապես մ.թ.ա. 8-7-րդ դարերին: Գյուղի վարչական տարածքը 5745,6 հա է:

Միջնադարում Հաղպատը անվանվել է նաև մայրաքաղաք, բայց ոչ թե մարդաշատ կամ քաղաքական տեսակետից, այլ որպես հոգևոր մեծ կենտրոն: Հաղպատն աշխարհին հայտնի է իր պատմաճարտարապետական կառույցներով՝ Հաղպատավանքով, որը եզակի կառույց է և գրանցված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Հաղպատավանքը հիմնադրվել է 976 թ. Բագրատունյաց Աշոտ ողորմածի կնոջ՝ Խոսրովանուշ թագուհու միջոցներով: Վանքն ունեցել է 500 հոգևորական: 1820-1828թթ. Եփրեմ կաթողիկոսի օրոք Մայր Աթոռը էջմիածնից տեղափոխվել է Հաղպատ:

Ներկայիս հաղպատցիների նախնիները Արցախի Խաչեն գավառից են:

Վերջին տարիներին գյուղում ակտիվացել է հյուրանոցային գործունեությունը: Յուրաքանչյուր տարի Հաղպատ են այցելում հազարավոր զբոսաշրջիկներ, որոնց մեծ մասը օթևան են գտնում գյուղի հյուրատներում և հյուրանոցներում: Բնակիչներն զբաղվում են անասնապահությամբ, հողագործությամբ, մեղվաբուծությամբ, մեծ է նաև տուրիզմի ոլորտում զբաղվածների թիվը:

ԳՅՈՒՂ ԾԱՂԿԱՇԱՏ

Ծաղկաշատ գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից 12կմ հարավ-արևելք՝ Գուգարաց լեռնաշղթայի արևմտյան լանջերին: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա, չորս կողմից շրջափակված է գեղատեսիլ անտառներով և սարերով:

Որպես գյուղ Ծաղկաշատն ունի հին պատմական արմատներ. ստույգ տվյալներ չեն արձանագրվել, սակայն 1927 թվականից պաշտոնապես այն անվանվել է Խաչի դուռ: Անվանումն առաջացել է գյուղի հարավ-արևմտյան կողմում, ոչ մեծ բլրի վրա հայտնաբերված 9-10-րդ դարերում կառուցված Խաչի Դուռ մատուռի անվանումից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գյուղը վերանվանվել է Ծաղկաշատ անունով, ընդգրկելով նաև հարակից տարածքները՝ Զարդ, Գեղատեղ, Կախմախուտ փոքր բնակավայրերը: Ծաղկաշատ անունն առաջացել է բազմաթիվ և բազմերանգ ծաղիկների բազմազանությունից:

Գյուղի վարչական տարածքը 2764,42 հա է: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, որի համար համեմատաբար բարենպաստ պայմաններ կան: Հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվում են տնամերձ հողամասերում:

ԳՅՈՒՂ ԶԻԼԻՁԱ

Զիլիգա գյուղը գտնվում է Վրաստանի Հանրապետության սահմանի մոտ, բնակավայրի կենտրոն Ալավերդի քաղաքից 30 կմ հեռավորության վրա: Գյուղի վարչական տարածքը 4481.13 հա է:

Զիլիգա (բառ. բացատրություն՝ սիգախոտով հարուստ վայր, ժող. բաց.՝ շատ հեռու) գյուղը հիմնադրվել է 1910թ., Հայկի որդի Խոռի կառուցած Խորակերտ կամ Խոռակերտ գյուղաքաղաքի տեղում, որից պահապանվել է համանուն եկեղեցին (XIIդ) և բազմաթիվ այլ

հուշարձաններ, գերեզմանոցներ և ավերված բնակատեղիներ: Պահպանվել է նաև Չախալաբերդ (պատմության մեջ՝ Բազաբերդ կամ Բազկերտ) ամրոցի մի մասը (IX-X):

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1250 մ բարձրության վրա՝ Լավարի ստորոտում:

Գյուղի կլիման ձմռանը դաժան է, անանցանելի է դառնում գյուղի միակ լեռնային ճանապարհը, և գյուղն ամիսներով կտրվում է արտաքին աշխարհից: Ամառը հաճախակի չորային է, որի պատճառով ջրիզգին նորմալ բերք չի ստանում:

Հողերն անջրդի են, հաճախակի երաշտ է լինում: Բնակիչները հիմնականում զբաղվում են եգիպտացորենի, կարտոֆիլի մշակությամբ: Բնակլիմայական պայմանները դժվարացնում են նաև անասնապահության աշխատանքները:

Գյուղում մարդիկ զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Գյուղում 100 տոկոս խմելու ջրով ապահովվելու համար անհրաժեշտ է ջրի պաշարների ավելացում, ջրատարի ու ներքին ցանցի վերանորոգում: Չկա գազամատակարարման համակարգ և ամենամոտ գազատարը գտնվում է գյուղից 15 կմ հեռավորության վրա:

ԳՅՈՒՂ ՃՈՃԿԱՆ

Ճոճկան գյուղը գտնվում է Դեբեդ գետի ձախ կողմում: Վարչական տարածքը 4285,29 հա է: Ըստ Ղազար Փարպեցու, Ճոճկան գյուղը հիմնվել է IV դարում Ջոջիկ իշխանի կողմից: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 740 մ բարձրության վրա: Կլիման ձմռանը մեղմ է, ամռանը շոգ, չորային: Հաճախակի են դարձել կարկտահարությունը, երաշտը, որից խիստ տուժում են գյուղատնտեսությամբ զբաղվողները: Համայնքում կա 408 առանձնատուն՝ 36180 քմ տարածքով: Ճոճկանը 19-րդ դարի վերջին եղել է Լոռի-Մելիքովի և իշխան Լևոն-Մելիքովի կալվածքը: 1960-1990 թթ գյուղում արտադրվել և մթերվել է տարեկան մինչև 3 000 տոննա պտուղ, 300 տ խաղող և 1000 տ բանջարեղեն:

ԳՅՈՒՂ ՄԵԾ ԱՅՐՈՒՄ

Մեծ Այրում գյուղը գտնվում է Դեբեդ գետի ափին:

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 690 մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 69 կմ հյուսիս-արևմուտք: Անկախությունից հետո միմյանց հարևանությամբ գտնվող Մեծ և Փոքր Այրում գյուղերը միացել են, որպես մեկ համայնք: Գյուղը հորհրդային Միության տարիներին բնակեցված է եղել ադրբեջանցիներով: Արցախյան շարժման ժամանակ գյուղը ամբողջովին լքվել է ադրբեջանցիների կողմից, և սկսած 1988թ. գյուղը վերաբնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված հայերով:

Կլիման բարեխառն է, ինչը հնարավորություն է տալիս մշակելու գրեթե ամեն բան: Գյուղի դաշտերում ոռոգման ջրագծերի վերանորոգումից հետո հիմնադրվել են դեղձենու այգիներ, ինչպես նաև կառուցվել են արևային ջրանոցներ: Վերջին տարիներին ավելացել է եգիպտացորենի և արևածաղկի մշակությունը: Այստեղ զբաղվում են նաև անասնապահությամբ: Գյուղում կառուցվել է 2.5 կմ ներհամայնքային ոռոգման ցանց, որը ընդգրկում է գյուղի տնամերձերի շուրջ 80%-ը (մոտ 120 հա), ինչի շնորհիվ ավելացել է տնամերձերի մշակությունը:

ԳՅՈՒՂ ՓՈՔՐ ԱՅՐՈՒՄ

Փոքր Այրում (նախկին անվանումը՝ Փուռ) գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում՝ մարզկենտրոն Վանաձորից հարավ-արևմուտք: Գյուղը տեղակայված է ծովի մակերևույթից 700 մ բարձրության վրա:

Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները գաղթել են Խոյից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, հացահատիկի, բանջարաբուստանային և կերային կուլտուրաների մշակությամբ:

ԳՅՈՒՂ ՆԵՂՈՑ

Նեղոցը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի արևմտյան փեշին՝ Դեբեդի աջ ափին: Նեղ ճանապարհի պատճառով գյուղը կոչել են Նեղոց: Գյուղը գտնվում է անտառապատ մեծ ձորի մեջ: Այս վայրը միջնադարյան բնակավայր է եղել. այդ մասին են վկայում շինությունների հետքերն ու մնացորդները:

Գյուղում բնակիչներն աշխատում են արդյունաբերության ոլորտում, նաև զբաղվում գյուղատնտեսական աշխատանքներով՝ մշակվում է խոտհարքների 70%-ը, վարելահողերի 20%-ը և տնամերձերի 90%-ը:

Համայնքում տարածված ծառատեսակներն են՝ բարդի, հաճարենի, թխկի, կեչի, ընկուզենի և այլն: Անտառներում տարածված կենդանիներ են արջը, գայլը, աղվեսը, եղնիկը, շնագայլը, դաշտամուկը, նապաստակը:

ԳՅՈՒՂ ՕՁՈՒՆ

Օձուն գյուղը գտնվում է Դեբեդի կիրճի ծախափնյա բարձրադիր սարավանդի վրա, Ալավերդի համայնքից 8 կմ հարավ-արևմուտք: Օձուն անունը հիշատակվում է 8-րդ դարից: Օձունը հանրապետության մեծ գյուղերից է, իսկ Լոռու մարզի ամենամեծ գյուղը: Այն գտնվում է մայրաքաղաք Երևանից 180 կմ, իսկ մարզկենտրոն Վանաձորից 50 կմ հեռավորության վրա՝ հանրապետության հյուսիսային մասում: Օձուն գյուղի մակերեսը 7879,78 հա է:

Օձունն աչքի է ընկնում բարենպաստ մեղմ կլիմայով, որը պայմանավորված է նրա տարածքի մակերևույթի համեմատաբար ոչ մեծ բարձրությամբ՝ 1000-1100մ ծովի մակարդակից:

Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլաբուծությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ:

ԳՅՈՒՂ ՇՆՈՂ

Շնող գյուղը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի արևելյան մասում, Դեբեդ գետի աջափնյա սարավանդի և հարակից ձորերով ու բլուրներով պատած, բարդ ռելիեֆով տարածքի վրա: Ծովի մակերևույթից բարձրությունը 670մ է: Կլիմա բարեխառն է՝ չափավոր մեղմ ձմեռներով, մոտիկ չոր արևադարձայինին: Շնողի պատմությունը սերտորեն առնչվում է Մեծ քարի գլուխ թաղամասը երբեմնի բռնող միջնադարյան Կայծոն ամրոցի հետ, որի ծաղկման շրջանը վերաբերում է X-XI դդ: Կայծոն-Շնող անվանափոխությունը կատարվել է ուշ շրջանում՝ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: 13-րդ դարի աղբյուրներում ամրոցը հիշվում է միայն Կայծոն անունով: 1915 թ. Ախթալա կայարանից Շնող են հասցվել Մեծ եղեռնից փրկված 285 գաղթականներ՝ տեղահանված Արևմտյան Հայաստանի Բասենի,

Էրզրումի նահանգի գյուղերից: Դրանց չնչին մասն է ապրել Շնողում: Շնողի բնակիչների եկամտի հիմնական աղբյուրը հանդիսացել է բազմատարր գյուղատնտեսությունն ու հանքարդյունաբերությունը:

ԳՅՈՒՂ ԹԵՂՈՒՏ

Թեղուտ բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի հյուսիս արևելքում, Դեբեդ գետի Շնող վտակի ափին: Ծովի մակերևույթից բարձր է 700-800մ: Ալավերդի քաղաքից հեռավորությունը 25 կմ է: Գյուղի վարչական տարածքը 2192,41 հա է:

Գյուղը հիմնադրվել է 20-րդ դարի դարասկզբին, սակայն ենթադրվում է, որ այն ավելի հին է, քանի որ բնակավայրի տարածքում կան բազմաթիվ մատուռներ ու խաչքարեր, ինչպես նաև բրոնզեդարյան դամբարանադաշտեր, միջնադարյան պատմաճարտարապետական կոթողներ:

Կլիման բարենպաստ է. ոչ շոգ ամառ և մեղմ ձմեռ, ինչը նպաստավոր պայման է մերձարևադարձային մշակաբույսեր աճեցնելու համար: Բնակավայրը հարուստ է երկնագույն փիրուզի և պղինձ մոլիբդենի հանքավայրերով: Թեղուտի բնակիչների եկամտի հիմնական աղբյուրը հանդիսացել է բազմատարր գյուղատնտեսությունն ու հանքարդյունաբերությունը:

Բնակավայրը սակավահող է, հողերը անջրդի են: Բնակիչները գյուղատնտեսությունից մեծ եկամուտներ չեն ստանում, անասնապահությամբ զբաղվողներն էլ շատ չեն: Կան մեղվապահությամբ զբաղվողներ: Արոտավայրերը և խոտհարքները հեռու են բնակավայրից: Գյուղտեխնիկայի բացակայությունը դժվարացնում է անասնակերի կուտակման խնդիրը: Գյուղատնտեսությունից ստացված բերքը բնակիչները օգտագործում են սեփական տնտեսություններում:

ԳՅՈՒՂ ԱՐԵՎԱԾԱԳ

Արևածագ գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից հարավ, քաղաքից 25 կմ հեռավորության վրա: Նախկինում բնակավայրը կոչվել է Ղաչաղան, Ուզուն լարա օյուն, Ուզունլար Ներքին, Ուզունլար Նոր: Արևածագ վերնավանվել է 1976 թ-ին: Գյուղը տեղադրված է Ձորագետի ստորին հոսանքում, սարավանդի վրա՝ ծովի մակարդակից 1270մ բարձրության վրա: Վարչական տարածքը 864,23 հա է: Գյուղը շրջապատված է դաշտերով, իսկ հարավային կողմից՝ ձորով: Կլիման բարեխառն լեռնային է, տևական ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700 մմ է: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում:

Գյուղում զբաղվում են հիմնականում երկրագործությամբ, դաշտավարությամբ, պտղաբուծությամբ, մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաներ: Զբաղվում են նաև խոշոր անասնապահությամբ և մեղվաբուծությամբ:

ԳՅՈՒՂ ԾԱԹԵՐ

Գյուղը հիմնվել է մոտ 150 տարի առաջ: Այն գտնվում է Ալավերդի քաղաքից 11 կմ հարավ, Դեբեդի բարձրադիր ձախ ափին՝ սարալանջի վրա: Գյուղի վարչական տարածքը 686 հա է, ծովի մակերևույթից բարձրությունը՝ 1260մ: Գյուղի տարածքը գտնվում է չափավոր

կլիմայական գոտում, չափավոր տաք ամառով և չափավոր տաք ձմեռով: Ռելիեֆը սարահարթային է, հյուսիս-արևելյան կողմից շրջապատված է լեռներով: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կարտոֆիլի մշակությամբ, անասնապահությամբ:

ԳՅՈՒՂ ԱՄՈՋ

Ամոջ գյուղը գտնվում է Լոռու մարզի հյուսիս-արևելյան բարձրադիր սարահարթի վրա՝ Օձուն գյուղից 1 կիլոմետր հյուսիս-արևելք: Գյուղի մասին հիշատակություններ գալիս են դեռևս 13-րդ դարից: Սակայն այստեղ առաջին բնակիչները Միքայել Լոու-Մելիքյանի ժառանգներն են եղել: Նրանք, լինելով Վրաստանի մեծահարուստ կալվածատերեր, Ամոջ գյուղում կառուցել են ամառանոցներ: հետագայում տեղափոխվել են մշտական բնակության: Գյուղի հին կամ այլ անվանումների շարքում հիշատակվում է Ամվոճ, Ամաջա, Ամորջի: Բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունը և հողագործությունն է, կան սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողներ:

ԳՅՈՒՂ ԱՐԴՎԻ

Գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից 9 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 45 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Արդու, Արտվի, Մելիքգյուղ, Մելիքքյադ անվանումները: Հնում մտել է Գուգարք աշխարհի Տաշիրք գավառի մեջ: Ըստ տեղացիների գյուղը հնում կոչվել է Մելիքգյուղ: Նոր ժամանակներում հանդիպում է նաև Արդու գրությամբ: Հովհանն Օձնեցին իր ծննդավայրից եկել է այստեղ, կառուցել ճգնարան և եկեղեցի:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Հողերի ոչ բերրի լինելու պատճառով օգտագործվում է մոտ 40%-ը, իսկ մնացած հողատեսքերը օգտագործվում են որպես խոտհարքներ:

ԳՅՈՒՂ ԱՅԳԵՀԱՏ

Գյուղը հիմնադրվել է 1719 թվականին՝ Շահվերդյաններ տոհմի կողմից: Տարածքում եղել է հին հեթանոսական բնակատեղի՝ իր հին աղբյուրով, որ կոչվել է Բերդաշեն: Նախկինում մտել է Թիֆլիս նահանգի Բորչալուի գավառի մեջ և ունեցել է Այգեհատ, Իգահատ, Իկհատ, Դանուշավան անվանումները: Այգեհատ վերանվանվել է 1991 թվականին: Գյուղն իր անվանում ստացել է այն պատճառով, որ շրջակայքում այգիները (խաղողի) վերջացել են, հատվել:

Գյուղատնտեսական հողերը բոլորը օգտագործվում են: Հողերի 60%-ը ոռոգելի են: Գյուղում զբաղվում են դաշտավարությամբ, մշակում են հացահատիկային, կերային, բանջարանոցային կուլտուրաներ: Զբաղվում են նաև անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Մինչև սեփականաշնորհումը զբաղվում էին նաև այգեգործությամբ (ծիրան, խնձոր, տանձ, սալոր): Նախորդող տասնամյակում այգեգործությունը լայն տարածում չունեցավ, սակայն գյուղում վերջին տարիներին ակտիվ զարգանում է ինտենսիվ այգեգործությունը (հիմնականում ընկուզենի): Վերջին տարիներին զրագացման հեռանկարային ճյուղ է համարվում նաև զբոսաշրջությունը, որի զարգացման համար արդեն քայլեր են կատարվում:

ԳՅՈՒՂ ԿԱՐՄԻՐ ԱՂԵԿ

Կարմիր Աղեկ (արևմտահայերեն՝ լավ) գյուղը վերաբնակեցվել է 1924թ, սակայն գյուղն ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն են գյուղի տարածքում և շրջակայքում գտնվող մի շարք գերեզմանոցներ և հին գյուղատեղեր: Գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս արևմտյան մասում, ծովի մակարդակից 1250մ բարձրության վրա: Ալավերդի քաղաքից հեռավորությունը 25 կմ է: Վարչական տարածքը 370,97 հա է:

Գյուղի տարածքն եղել է Օձունի վանքապատկան հողեր: 1935թ Կարմիր Աղեգի գյուղում վերաբնակվել է եղեռնից գաղթած 7 ընտանիք:

Գյուղն ունի լեռնատափաստանային գոտուն բնորոշ կլիմա: Գյուղի մշակելի հողերը գտնվում են թեք հարթությունների՝ թույլ թեք և միջին թեք լանջերի վրա: Համայնքի տարածքում զարգացող բնական բուսական ծածկույթը բաղկացած է հացազգի, թիթեռնակածաղկավոր բույսերից, թփուտներից և անտառային բույսերից:

Բնակավայրում հիմնականում զբաղվում են կարտոֆիլի, հացահատիկի և կերային կուլտուրաների արտադրությամբ, նաև այգեգործությամբ (սալոր, խնձոր, տանձ, կեռաս):

Կարմիր Աղեկ բնակավայրում զարգացած է նաև անասնապահությանը, որի հետագա զարգացման համար խոտհարքների տարածքները չեն բավականացնում: Այդ պատճառով վարելահողերն աստիճանաբար վեր են ածվում կերային կուլտուրաների արտադրության:

ԳՅՈՒՂ ՀԱԳՎԻ

Հագվի գյուղը գտնվում է հանրապետության հյուսիս-արևելքում, Ալավերդի քաղաքից 15 կմ հեռավորության վրա: Հագվի գյուղը վերահիմնադրվել է 17-րդ դարում, առաջին վերաբնակիչները եղել են Օձունի, Հաղպատի հողագուրկ մի քանի ընտանիքներ, որոնց միացել է նաև Արցախից եկած մեկ ընտանիք: 1915 թվականի եղեռնից հետո Հագվիում վերաբնակվել են ևս մի քանի ընտանիքներ՝ Վանից, Մուշից և Ալաշկերտից: Չնայած գյուղի հիմնադրումը թվագրվում է 17-րդ դարին, սակայն գյուղու կա փոքրիկ եկեղեցի, որը կառուցվել է 12-րդ դարում:

Հագվի բնակավայրը միջին լեռնային է՝ շրջապատված անտառներով և լեռներով: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1200 մ բարձրության վրա: Գյուղի կլիման բարեխառն է, ձմեռը մեղմ, ամառը՝ զով: Գյուղի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ (ցորեն և կարտոֆիլ):

ԳՅՈՒՂ ՄՂԱՐԹ

Գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում, Վիրահայոց լեռնաշղթայի Շեկաղբյուր լեռան հարավային լանջին, ծովի մակերևույթից 1425 մ բարձրության վրա: Բնակավայրի հեռավորությունը Ալավերդի քաղաքից 23 կմ է: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Գյուղի բնակիչները զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակմամբ:

Գյուղի խմելու ջուրը հանդիսանում են 6 բնական աղբյուրները, որոնք տարիների ընթացքում ցամաքել են և չեն բավականացնում գյուղացիների կարիքները հոգալուն, և

անասուններին ջուր տալու հարցում: Ոռոգման համար օգտվում են Լոռու ջրանցքից, ներտնտեսային ոռոգման ցանց չկա:

ԳՅՈՒՂ ՔԱՐԿՈՓ

Քարկոփը գտնվում է ՀՀ Լոռու մարզի հյուսիսային մասում, որը խորհրդային տարիներին ուներ ավանի կարգավիճակ: Հայտնի է եղել Շեբզավոդ անվամբ, որը գալիս է խորհրդային տարիներին Քարկոփին տրված ուսերեն անունից: Հետագայում այն թարգմանվել է բառացի և դարձել Քարկոփ: Քարկոփը հիմնադրվել է 30-ական թվականներին, բնակավայրին կից գտնվող բազալտի և գրանիտի վերամշակմամբ զբաղվող գործարանի շուրջ: Քարկոփից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող Ժայռի մասին է մեծ բանաստեղծ Նաիրի Զարյանն իր Ռուշանի քարափը բանաստեղծության մեջ պատմում Քարկոփի մասին: Քարկոփի ձախակողմյան հատվածով է հոսում Դեբեդ գետը:

Բնակիչները զբաղվում են հողագործությամբ՝ հիմնականում տնամերձերի մշակությամբ:

Ալավերդի համայնքը գտնվում է հանրապետության հյուսիսային մասում, վարչականորեն մտնում է Լոռու մարզի մեջ, մարզկենտրոն Վանաձորից հեռավորությունը 44 կմ է, Երևանից՝ մոտ 167 կմ: Ալավերդի համայնքը տնտեսաաշխարհագրական բարենպաստ դիրք ունի: Սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը, ինչը կարևոր առավելություն է՝ ցանկացած արտադրանք հարևան հանրապետություն արտահանելու համար: Համայնքի միջով է անցնում հանրապետության երկաթուղային հաղորդակցության գլխավոր երակը՝ Թբիլիսի-Երևան երկաթգիծը, հանրապետության արտահանման և ներկրման ավտոտրանսպորտային գլխավոր՝ Թբիլիսի-Ալավերդի-Երևան մայրուղին, ինչպես նաև՝ Հայաստանի ամենաջրառատ անդրսահմանային Դեբեդ գետը:

Ալավերդի համայնքի մակերեսը 740,340 քառ. կմ է: Կտրտված ու բարդ ռելիեֆի պատճառով համայնքի թաղամասերն ու բնակավայրերը իրարից բավականին հեռու են: Ռելիեֆին բնորոշ են տարբեր մակարդակի բարձրություններ (600-1700 մ), խիստ մեծ թեքություններ (մինչև 350): Տեղումների միջին քանակը 550-800 մմ է:

2023թ-ին համայնքում հաշվառված է եղել 42546 մարդ, որից 20888 (49,1%) տղամարդ և 21658 (50,9%) կին:

Հ/Հ	Բնակավայր	Բնակչության քանակը	Իգական	Արական
1	Ալավերդի	19594	10176	9418
2	Ախթալա	2664	1440	1224
3	Ամոջ	164	85	79
4	Այգեհատ	281	145	136
5	Արդվի	179	82	97
6	Արևածագ	874	439	435
7	Աքորի	2558	1295	1263
8	Թեղուտ	813	392	421
9	Ծաթեր	413	193	220
10	Ծաղկաշատ	185	87	98
11	Կաճաճկուտ	427	207	220
12	Կարմիր Աղեկ	160	74	86
13	Հազվի	518	245	273
14	Հաղպատ	813	416	397
15	Ճոճկան	1989	968	1021
16	Մեծ Այրում	713	363	350
17	Մղարթ	426	209	217
18	Նեղոց	332	170	162
19	Շամլուղ	931	478	453

20	Շնող	2923	1426	1497
21	Զիլիզա	194	90	104
22	Փոքր Այրում	72	36	36
23	Քարկոփ	378	203	175
24	Օծուն	4945	2439	2506
Ընդամենը		42546	21658	20888

Ալավերդի համայնքի վարչական տարածքը կազմում է 74034.00 հա (համայնքի վարչական տարածքը՝ ըստ առանձին բնակավայրերի, տե՛ս Գծապատկեր 1), որից՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 26348.58 հա, որը կազմում է վարչական տարածքի 35,6%-ը, բնակավայրի հողեր՝ 2966,52 հա, որը կազմում է վարչական տարածքի 4%-ը, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր՝ 1427,80 հա, որը կազմում է վարչական տարածքի 1,9%-ը, էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 462,81 հա, որը կազմում է վարչական տարածքի 0,6%-ը, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 269,2 հա, որը կազմում է վարչական տարածքի 0,4%-ը, հատուկ նշանակության հողեր՝ 22,91 հա, որը կազմում է վարչական տարածքի 0,03%-ը, անտառային հողեր՝ 42238,26 հա, որը կազմում է վարչական տարածքի 57,1%-ը, ջրային հողեր՝ 297,92 հա, որը կազմում է վարչական տարածքի 0,4%-ը:

Ալավերդի համայնքի վարչական տարածք				
h/h	Անվանումը	Չափման միավոր	Քանակ	%
1	Ալավերդի համայնքի տարածք	հա	74034.00	100
1.1.	Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	26348.58	35.6
1.2.	Բնակավայրի հողեր	հա	2966.52	4.0
1.3.	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր	հա	1427.80	1.9
1.4.	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր	հա	462.81	0.6
1.5.	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	հա	269.20	0.4
1.6.	Հատուկ նշանակության հողեր	հա	22.91	0.03
1.7.	Անտառային հողեր	հա	42238.26	57.1


1.8.	Ջրային հողեր	հա	297.92	0.4
------	--------------	----	--------	-----

Համայնքային սեփականության հողերը կազմում են ընդամենը 14523,2 հա, որից՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 13223,72 հա, որը կազմում է համայնքային սեփականության հողերի 91,1%-ը, բնակավայրի հողեր՝ 1023,68 հա, որը կազմում է համայնքային սեփականության հողերի 7%-ը, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր՝ 142,11 հա, որը կազմում է համայնքային սեփականության հողերի 1%-ը, էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 14,47 հա, որը կազմում է համայնքային սեփականության հողերի 0,1%-ը, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 79,86 հա, որը կազմում է համայնքային սեփականության հողերի 0,5%-ը, հատուկ նշանակության հողեր՝ 4.00 հա, որը կազմում է համայնքային սեփականության հողերի 0.03%-ը, անտառային հողեր 21.98 հա, որը կազմում է համայնքային սեփականության հողերի 0.2%-ը, ջրային հողեր՝ 13,38 հա, որը կազմում է համայնքային սեփականության հողերի 0,1%-ը:

Համայնքային սեփականության հողեր				
h/h	Անվանումը	Չափման միավոր	Քանակ	%
1	Համայնքային սեփականության հողերը կազմում են ընդամենը	հա	14523.2	100
1.1.	Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	13223.72	91.1
1.2.	Բնակավայրի հողեր	հա	1023.68	7.0
1.3.	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողեր	հա	142.11	1.0
1.4.	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր	հա	14.47	0.1
1.5.	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	հա	79.86	0.5
1.6.	Հատուկ նշանակության հողեր	հա	4.00	0.03
1.7.	Անտառային հողեր	հա	21.98	0.2
1.8.	Ջրային հողեր	հա	13.38	0.1

Գծապատկեր 1. Ալավերդի համայնքի վարչական տարածքը՝ ըստ առանձին բնակավայրերի, հա

Ալավերդի համայնքի վարչական տարածք հա



2.2. Ալավերդի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը նկարագրող ցուցանիշներ

Ալավերդին եղել է բազմաճյուղ տնտեսություն ունեցող արդյունաբերական համայնք, տնտեսության մեջ առանցքային դեր է խաղացել պղնձի արտադրությունը: Պղնձաձուլական գործարանների կենսագրության առավել փառահեղ էջերն անցյալ դարի 70-80-ական թվականներն էին: Թեև այդ տարիներին գործարաններն աշխատում էին միութենական հսկա տնտեսության համակարգում, սակայն արդյունաբերական համալիրի հզորացումն ու արդյունաբերական ծավալների ավելացումն ուղեկցվեցին Ալավերդու և տարածաշրջանի տնտեսության պայմանների զգալի բարելավմամբ, մշակութային կյանքի ակտիվացմամբ:

Ներկայում Ալավերդի համայնքում տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու զբոսաշրջությունը:

Ալավերդի համայնքի Թեղուտ բնակավայրում ներկայում գործում է «Թեղուտ» ՓԲԸ հանքարդյունաբերական ձեռնարկությունը, որտեղ աշխատում է շուրջ 1000 մարդ, Ախթալա բնակավայրում՝ «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ն, որտեղ աշխատում է 494 մարդ, Ալավերդի բնակավայրում՝ աղացագնդերի արտադրամաս, որտեղ աշխատում է շուրջ 250 մարդ:

Համայնքում նախկինում գործել է և այժմ էլ շարունակում է գործունեություն ծավալել հացի գործարանը, մի քանի այլ փոքր արտադրամասեր, որոնց արտադրանքը հիմնականում սպառվում է Ալավերդիում և հարակից համայնքներում: Համայնքի տարածքում կան մեկ տասնյակից ավելի քարի վերամշակման արտադրամասեր, որոնց սպառման շուկան հիմնականում Հայաստանի Հանրապետությունն ու Ռուսաստանի Դաշնությունն են:

Ալավերդի համայնքում գործում են նաև կաթի վերամշակման, գարեջրի, օղու, պահածոների, խմորեղենի, կարի փոքր արտադրամասեր, որոնց արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանն է: Կաթի մշակումը գյուղական բնակավայրերում իրականացվում է հիմնականում տնային պայմաններում և սպառվում է տեղի շուկայում: Համայնքում գործում են նաև շինարարական կազմակերպություններ, սառնարանային փոքր տնտեսություններ, ալյուրացներ, գյուղատնտեսական կոոպերատիվ, ոչ մեծ թռչնաֆաբրիկա:

Ալավերդին ունեցել է կարի խոշոր արտադրամաս, տեքստիլ արդյունաբերություն: Ներկայում Ալավերդի համայնքում կան անհրաժեշտ նախադրային՝ կարի արտադրություն հիմնելու համար: Վերջին տարիներին Ալավերդու համայնքապետարանը կարի արտադրության ոլորտում համապատասխան որակավորում և փորձառություն ունեցող անձանց հաշվառում է իրականացրել՝ գրանցելով 650 մարդու:

Աստիճանաբար աշխուժանում են նաև սպասարկման ոլորտի հաստատությունները: Գործում են «Արդշինինվեստբանկի», «ACBA-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ» բանկի, «Հայէկոնոմբանկի», ԱՐԵԳԱԿ և ՖԻՆԿԱ ՈՒՎԿ-ների մասնաճյուղերը՝ մատուցելով ծառայություններ: Համայնքում գործում են նաև հաշվապահական, նոտարական, քաղաքաշինական, փաստաբանական, գրադարանային, թանգարանային, ապահովագրական, գազամատակարարման, ջրամատակարարման, էներգամատակարարման, տրանսպորտի, ավտոտեխսպասարկման, կենցաղային, տպագրական և այլ ծառայություններ:

Ռեստորանները, հյուրանոցները, հյուրատները, խանութները զգալի թիվ են կազմում, որոնք աստիճանաբար զարգանում են՝ սպասարկման ոլորտում մատուցելով բարձրորակ ծառայություններ: Համայնքում կան նաև առանձնատուն-հյուրատներ՝ ապահովված

անհրաժեշտ բոլոր պայմաններով, որոնք արդեն մի քանի տարի է՝ ընդունում են զբոսաշրջիկների արտերկրից, հանրապետության այլ բնակավայրերից: Տարեցտարի ավելանում է այն ձեռներեցների թիվը, որոնք հատկապես ամռան ամիսներին ընտանիքով ներգրավվում են զբոսաշրջային բիզնեսի մեջ և ծառայություններ են մատուցում զբոսաշրջիկներին (B&B): Չնայած սրան, զբոսաշրջիկների թվաքանակի ավելացմանը զուգընթաց, հյուրանոցների, հյուրատների ցանցի ընդլայնման անհրաժեշտություն կա:

Համայնքում կան հանգստի գոտիներ և գեղեցիկ հուշադրյուրներ, որտեղ համայնքի բնակիչները և զբոսաշրջիկներն անց են կացնում իրենց հանգիստը: Տարեցտարի ավելանում են հանգստի համար նախատեսված տաղավարները:

Համայնքում ընդհանուր 26348.58 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք կա, որից 13223.72 հա համայնքային սեփականություն է, որտեղ կարելի է պտղատու այգիներ, ջերմոցային տնտեսություններ հիմնել: Համայնքի գյուղերում և գյուղական թաղամասերում բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ (այդ թվում՝ տնամերձ այգիների մշակմամբ) ու անասնապահությամբ: Կարմիր Աղեկ, Հագվի, Արդվի, Ամոջ, Արևածագ, Այգեհատ, Ծաթեր, Մղարթ, Օծուն, Շնող, Այրում, Ճոճկան և Հաղպատ բնակավայրերում զբաղվում են հացահատիկային կուլտուրաների (ցորեն, գարի, եգիպտացորեն, վարսակ), կարտոֆիլի, ցանովի խոտաբույսերի, լոբազգիների և ընդեղենի մշակմամբ: Վերջին տարիներին համայնքի մի շարք բնակավայրերում նկատվում է հատապտուղների (ազնվամորի, անփուշ մոշ) այգիների ընդլայնման և նորերի հիմնման տենդենց: Այգեհատ բնակավայրում վերջին տարիներին հիմնվել են ընկուզենու այգիներ: Համայնքի Թեղուտ և Շնող բնակավայրում բնապահպանական ծրագրերի շրջանակում տնկվել և տարեցտարի ընդլայնվում են պտղատու այգիների (արքայանարինջ, դեղձ, խնձոր, սալոր, կեռաս, սերկևիլ, թուֆ, դեղձ, ընկուզենի, տխլի) տարածքները (ներկայում շուրջ 159 հա): Այգիներից ստացվող մեծ քանակությամբ բերքը հնարավորություն է ստեղծում համայնքում չրերի արտադրության, պահածոների գործարանի հիմնման և սառնարանային տնտեսությունների ստեղծման/ընդլայնման համար: Վերոնշյալից բացի՝ գյուղական թաղամասերի, համայնքի կազմում ընդգրկված գյուղերի բնակիչներն ամռան ամիսներին զբաղվում են հատապտուղների և մրգերի հավաքչությամբ, նաև՝ դրանց մշակմամբ: Հատապտղի և մրգի զգալի քանակը հնարավորություն է ընձեռում համայնքում հիմնելու նաև պտղի/մրգերի վայրկենական սառեցման հոսքագիծ: Հաշվի առնելով վերջին տարիների մշակվող հողատարածքների ավելացման տենդենցը՝ գյուղմթերքի իրացման խնդրի լուծման, համայնքում գյուղատնտեսական արտադրանքի մշակման արտադրության հիմնման դեպքում, գյուղատնտեսության ոլորտում կավելանա բնակիչների ներգրավվածության մակարդակը՝ բարելավվելով գյուղական բնակավայրերի բնակիչների սոցիալական վիճակը և նպաստելով համայնքում գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը:

Համայնքապետարանը վերջին տարիներին ձեռք է բերել գյուղատնտեսական տեխնիկա և գործիքներ, ինչով շուկայականից ցածր գներով ծառայություն է տրամադրվում համայնքի բնակիչներին: Սակայն առկա գյուղտեխնիկան բավարար չէ համայնքի բոլոր բնակավայրերում գյուղատնտեսական սեզոնային աշխատանքներ իրականացնելու համար, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին և արդյունավետ իրականացնելու գործում: Գյուղական բնակավայրերը՝ հեռու գտնվելով գյուղատնտեսական շուկաներից և գյուղմթերքի վերամշակման ձեռնարկություններից, բախվում են բերքի իրացման խնդրին: Գյուղատնտեսության ոլորտում

մեկ այլ խնդիր էլ հակակարկտային կայանների բացակայությունն է, ինչը բերքի կորստի պատճառ է դառնում:

Համայնքում վերջին տարիներին տարբեր ծրագրերով վերանորոգվել են ոռոգման ջրագծերը, կառուցվել են նորերը, ինչը նպաստել է համայնքում մշակող հողերի տարածքների ավելացմանը: Սակայն ոռոգման ջրի խնդիրը դեռևս ամբողջությամբ լուծված չէ: Ոռոգման խնդրի լուծումը ևս զարկ կտա համայնքում գյուղատնտեսական ոլորտի զարգացմանը:

Համայնքում հաշվառված է 17396 գլուխ անասուն, 26358 թև թռչուն և 3584 մեղվաընտանիք:

Բնակավայր	Խոշոր եղջերավոր կենդանի	Խոզ	Ոչխար	Այծ	Թռչուն	Մեղվա ընտանիք
ք. Ալավերդի	21	149	30	140	1712	363
ք. Ախթալա	96	80	0	15	142	117
ք. Շամլուղ	134	103	87	10	349	82
գ. Օձուն	1870	632	40	0	3450	299
գ. Շնող	933	0	0	0	1510	307
գ. Աքորի	411	242	570	35	930	110
գ. Ճոճկան	266	508	253	2	2500	295
գ. Արևածագ	593	260	0	0	1554	54
գ. Մեծ Այրում	161	149	458	13	1290	83
գ. Սանահին	446	157	171	120	980	260
գ. Հաղպատ	409	254	36	50	711	224
գ. Ծաթեր	311	82	753	0	1027	60
գ. Այգեհատ	241	146	0	31	987	114
գ. Հազվի	282	211	69	150	540	252
գ. Կաճաճկուտ	372	60	146	0	280	90
գ. Մղարթ	604	143	404	80	1181	0
գ. Կարմիր Աղեկ	362	76	104	0	3181	21
գ. Ծաղկաշատ	334	391	123	17	514	67
գ. Զիլիզա	77	146	115	0	319	17
գ. Արդվի	239	22	144	32	440	60
գ. Թեղուտ	155	38	54	13	1065	410
գ. Ակներ	196	125	0	2	531	93
գ. Ամոջ	59	12	90	37	163	3
գ. Նեղոց	55	33	14	6	93	167
գ. Բենդիկ	99	40	119	35	294	36
գ. Ախթալա	36	7	0	0	0	0
գ. Քարկոփ	0	0	0	0	615	0
Ընդամենը	8762	4066	3780	788	26358	3584

Կաթի վերամշակումն իրականացվում է հիմնականում տնային պայմաններում: Համայնքի կազմում ընդգրկված գյուղերի անասնապահության զարգացումը բավարար հիմք է՝ համայնքում կաթի վերամշակման արտադրության ընդլայնման կամ նոր արտադրության հիմնման համար: Անասնապահության ոլորտում ևս առկա են մի շարք խնդիրներ: Մասնավորապես՝ սպանդանոցների ոչ բավարար քանակը, սառնարանային տնտեսության բացակայությունը, մսամթերքի վերամշակման արտադրությունների բացակայությունը, իրացման դժվարությունները:

Համայնքում առկա են նաև մեղվաբուծությամբ զբաղվող տնտեսություններ, սակայն ոլորտը մեծ տարածականություն չունեցող ուղղություններից է: Ոլորտի զարգացումը զարկ տալու համար կարևոր է մեղվապահության ոլորտում մասնագիտական գիտելիքի փոխանակման դասընթացների կազմակերպումը, իրացման նոր շուկաների համար սերտիֆիկացման գործընթացներին աջակցության տրամադրումը:

Արդյունաբերությանը, արտադրությանը և գյուղատնտեսությանը զուգահեռ՝ Ալավերդիում կան անհրաժեշտ բոլոր նախադրյալները եկամտաբեր դարձնելու նաև զբոսաշրջության ոլորտը: Արդյունքում համայնքում ու տարածաշրջանում կլուծվեն տնտեսական, սոցիալական ու բնապահպանական հիմնախնդիրներ:

Ալավերդին աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ: Համայնքի շրջակայքը հարուստ է պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով: Դրանց մեջ են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահինի և Հաղպատի վանական համալիրները, Սանահինի պատմական (Քարե) կամուրջը: Այս արժեքների հանդեպ առանձնակի մեծ է զբոսաշրջիկների հետաքրքրությունը, որոնց թիվը տարեցտարի աճում է:

Ալավերդի համայնքում զբոսաշրջիկների այցելության հիմնական հոսքն ապահովում են զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հետևյալ պատմամշակութային հուշարձանները.

Անվանումը	Թվագրվում է	Գտնվելու վայրը
Սանահինի վանական համալիր	10-13-րդ դդ.	Ալավերդի քաղաք
Հաղպատի վանական համալիր	10-13-րդ դդ.	Ալավերդի քաղաք
Սանահինի Քարե կամուրջ	12-րդ դար	Ալավերդի քաղաք
Արտյոմ Միկոյանին հուշահամալիր	1982թ.	Ալավերդի քաղաք
Կոշաբերդի ամրոց	10-13 դդ.	Ալավերդի քաղաք
Սուրբ Սարգիս մատուռ	13-րդ դար	Ալավերդի քաղաք
Քարայր-կացարան	-	Ալավերդի քաղաք
Սուրբ Հարություն եկեղեցի	13-րդ դար	Ալավերդի քաղաք
Խաչքար Գրիգոր Տուտեորդու	12-րդ դար	Ալավերդի քաղաք
Աղբյուր	13-րդ դար	Ալավերդի քաղաք
Քարայր-կացարանների համալիր	-	Ալավերդի քաղաք

Սեդվու Սուրբ նշան եկեղեցի և Սեդվու դիտաշտարակ	12-13-րդ դդ.	Աքորի-Կաճաճկուտ գյուղ
Սուրբ Գևորգ եկեղեցի	-	Աքորի գյուղ
Ագեղցի եկեղեցի	5-6 դար	Աքորի գյուղ
Բգավոր եկեղեցի		Աքորի գյուղ
Խաչի դուռ մատուռ	9-10-րդ դար	Ծաղկաշատ գյուղ
Կայան (Դսեվանք) ամրոցը	13-րդ դար	Հաղպատ գյուղ
Սուրբ նշան եկեղեցին	976-991 թթ.	Հաղպատ գյուղ
Սուրբ Գրիգոր եկեղեցի	1025 թ.	Հաղպատ գյուղ
Սուրբ Աստվածածին եկեղեցի	13-րդ դար	Հաղպատ գյուղ
Կուսանաց անապատը՝ Սուրբ Տիրամոր եկեղեցով	10-20-րդ դդ.	Հաղպատ գյուղ
Ջորավոր եկեղեցի	13-րդ դար	Հաղպատ գյուղ
Սուրբ Սիոն եկեղեցի	4-րդ դար	Հաղպատ գյուղ
Սուրբ Գևորգ (Ջորավանք) եկեղեցի	4-րդ դար	Հաղպատ գյուղ
Ջարնի-Պարնիի քարայր-ամրոցային համալիր	10-12-րդ դար	Հաղպատ գյուղ
Խորակերտ եկեղեցի	10-12-րդ դդ.	Ջիլիգա գյուղ
Խուճապի վանքը	12-րդ դդ.	Ջիլիգա գյուղ
Սուրբ Սարգիս եկեղեցի	5- 7-րդ դդ.	Ջիլիգա գյուղ
Չախալաբերդ (Բազմաբերդ կամ Բազկերտ)	9-10-րդ դդ.	Ջիլիգա գյուղ
Կարմրագեղցի եկեղեցի	12-րդ դար	Ջիլիգա գյուղ
Աղեգու եկեղեցի	12-րդ դար	Ջիլիգա գյուղ
Վելադի եկղեցի	12-րդ դար	Ջիլիգա գյուղ
Խնձորեքսի վանք	10-12-րդ դդ.	Ջիլիգա գյուղ
Ամրոց Կոզման սարի վրա	Ք. ա. 2-1 հազ.	Շնող գյուղ
Ամրոց Կայծոն և եկեղեցու մնացորդներ	10 դ.	Շնող գյուղ
Եկեղեցի Սուրբ Գևորգ, զանգակատուն	1893 թ.	Շնող գյուղ
Եկեղեցի Սուրբ Սարգիս	1894 թ.	Շնող գյուղ
Մատուռ Սուրբ Աստվածածին («Տերունական խաչարձան»)	1222 թ.	Շնող գյուղ
Ամրոց «Վահանաբերդ»	Ք.ա. 4-3 հազ.	Շնող գյուղ
Դամբարանադաշտ	Ք.ա. 4-3 հազ.	Շնող գյուղ
Մատուռ Սուրբ Սարգիս	16-17-րդ դդ.	Շնող գյուղ
Մատուռ «Բովեր»	5-7-րդ դդ.	Շնող գյուղ

Քարայր-կացարանների համալիր	միջնադար	Շնող գյուղ
Դամբարան	Ք. ա. 2-1 հազ.	Շնող գյուղ
Դամբարանադաշտ	Ք. ա. 2-1 հազ.	Շնող գյուղ
Քոբայրի վանական համալիր	12-րդ դար	Այգեհատ գյուղ
Հին Իկհատ բնակատեղի	12-17-րդ դդ.	Այգեհատ գյուղ
Մատուռ Սուրբ Կիրակի	13-րդ դար	Այգեհատ գյուղ
ԵԱԶ հուշարձան	1983թ	Այգեհատ գյուղ
Արդվիի Սուրբ Հովհաննես վանք	8-րդ դար	Արդվի գյուղ
Կարմիր վանք	10-11-րդ դդ.	Արդվի գյուղ
Աղբյուր «Օձի պորտ»	7-8-րդ դդ.	Արդվի գյուղ
Խաչքար «Վարդան զորավար»	13-14-րդ դդ.	Թեղուտ գյուղ
Ձորիգեղի կամուրջ	17-րդ դար	Թեղուտ գյուղ
Մատուռ «Ագեղցի»	12-13-րդ դդ.	Թեղուտ գյուղ
Մանստևի վանական համալիր	13-րդ դար	Թեղուտ գյուղ
Ղարաքոթուկի հնձան	13-րդ դար	Թեղուտ գյուղ
Ղարաքոթուկի դամբարան	12-17-րդ դդ.	Թեղուտ գյուղ
«Բարձրել» մատուռ	12-րդ դար	Թեղուտ գյուղ
Բարձրելի դամբարանադաշտ	Մ.թ.ա. X դ.	Թեղուտ գյուղ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1-րդ հազ	Թեղուտ գյուղ
Նահատակի վանք	1621թ	Մեծ Այրում գյուղ
Օձունի Սուրբ Աստվածածին եկեղեցի	6-րդ դար	Օձուն գյուղ
Ծիրանավոր-Ծաղկավանք եկեղեցի	5-րդ դար	Օձուն գյուղ
Հոռոմայրի Սուրբ Նշան Վանական համալիր	10-13-րդ դար	Օձուն գյուղ
Կոթող-մահարձան	5-6-րդ դարեր	Օձուն գյուղ
Հուշաղբյուր	1960թ.	Օձուն գյուղ
Սուրբ Սարգիս Խաչքար	11-րդ դար	Օձուն գյուղ
Գյուղատեղի	միջնադար	Օձուն գյուղ
Խաչքար Գուդեխի	1228թ	Օձուն գյուղ
Քարայրեր		Օձուն գյուղ
«Մատուռ ձորի»	12-րդ դ.	Արևածագ գյուղ
Մատուռ Սուրբ Սարգիս	10-11-րդ դդ.	Արևածագ գյուղ
Սուրբ Գևորգ եկեղեցի	10-13-րդ դդ.	Շամլուղ գյուղ
Նիկողայի Խաչքար	1645թ	Շամլուղ քաղաք
Եռավանք	10-15-րդ դդ.	Շամլուղ քաղաք
Հունական մատուռ	13-րդ դար	Շամլուղ քաղաք
Սատանի վանք	13-րդ դար	Շամլուղ քաղաք
Եկեղեցի «Ճգնավորի վանք»	11-13-րդ դդ.	Ծաթեր գյուղ
Դամբարանադաշտ	Ք. ա. 2-1 հզ.	Ծաթեր գյուղ

Եկեղեցի Սուրբ Աստվածածին	12-րդ դար	Ծաթեր գյուղ
Քարայր-կացարանների համալիր	Ք. ա. 3-1 հզ.	Ծաթեր գյուղ
Նահատակի վանք	1612թ	Ճոճկան գյուղ
Շիրթանավանք	17-րդ դար	Ճոճկան գյուղ
Սուրբ Աստվածածին եկեղեցի	1886թ	Ճոճկան գյուղ
Սուրբ Աստվածածին եկեղեցի	12-13-րդ դդ.	Հագվի գյուղ
«Սուրբ Գայանե» մատուռ	2006 թ	Նեղոց գյուղ
Ամրոց «Սղնախի զառ»	10-16-րդ դդ	Կարմիր Աղեկ գյուղ
Ամրոց «Ախթալա հյուսիսային դարպասներ»	13-րդ դար	Ախթալա քաղաք
Ամրոց «Թոխմախ կալա» Ամրոց-դիտակետ (Լենկ-Թեմուր)	Ք.ա. 2-1դդ. հազ. 10-13 դդ.	Ախթալա քաղաք
Ամրոց «Կկվի բերդ»	-	Ախթալա քաղաք
Գյուղատեղի «Ապրոյի գոմեր» (պահպանվում է հին գյուղատեղի, տապանաքարեր, կանգուն խաչքարեր)	-	Ախթալա քաղաք
Արամյանցի դղյակ	1903 թ.	Ախթալա քաղաք
Դամբարանադաշտ (պեղել է Ժակ դը Մորգանը)	Ք.ա. 2-1 հազ.	Ախթալա քաղաք
Ամրոց Ախթալա (պղնձահանք, միսխանա)	10-13-րդ դդ.	Ախթալա քաղաք
Վանական համալիր Ախթալա (Պղնձահանքի վանք, Մարիամ Աննայի վանք, Մեյրիման)	13-րդ դար	Ախթալա քաղաք
Միաբանության շենքը	-	Ախթալա քաղաք
Եկեղեցի Սբ.Գևորգ	1242-1250 թթ.	Ախթալա քաղաք
Վանական համալիր Սուրբ Երրորդություն	13-րդ դար	Ախթալա քաղաք

Ալավերդին ունի զբոսաշրջության կայուն զարգացման համար անհրաժեշտ հիմնական նախադրյալներ՝ պատմամշակութային հարուստ ժառանգություն, բնակլիմայական բարենպաստ պայմաններ և աշխարհագրական դիրք, ռեստորաններ, հյուրանոցներ ու հյուրատներ: Արդեն իսկ քայլեր են արվել համայնքում ագրոտուրիզմը, էկոտուրիզմը (թռչնադիտարկման ծրագիր), ապիտուրիզմը, էքստրեմալ տուրիզմը զարգացնելու ուղղությամբ: Զբոսաշրջության զարգացման համար նախադրյալ է նաև անտառների առկայությունը (անտառային թերապիայի կազմակերպում), որոնք հարուստ են պտղատու և դեկորատիվ ծառատեսակներով, հատապտուղներով, բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերով: Նախադրյալ է նաև համայնքի տարածքում գեղատեսիլ կիրճով հոսող Հայաստանի ամենաջրառատ անդրսահմանային Դեբեդ գետը՝ ռաֆթինգի հնարավորությամբ: Արկածային հանգստի այս էքստրեմալ տեսակը վերջին տարիներին ակտիվ զարգանում է:

Համայնքում կազմակերպվող «Խորովածի և արվեստի» ու «Թատերական Լոռի» միջազգային փառատոններն իրենց նպաստն են ունենում համայնքում գաստրոզբոսաշրջության և մշակութային զբոսաշրջության զարգացմանը՝ ապահովելով նաև մշակույթի մոնետիզացիա:

Վերջին տարիներին զբոսաշրջային ոլորտում ենթակառուցվածքային զարգացումը, համայնքում հյուրանոցային տնտեսությունների կառուցումը, ռեստորանային գործարարության (բիզնեսի) ընդլայնումը, ավտոմայրուղիների բարեկարգումն ևս իրենց դրական ազդեցությունն են ունեցել զբոսաշրջության զարգացման գործում:

Սակայն համայնքի բնակավայրերում ոչ արդիական տեխնոլոգիաներով աշխատող հանքարդյունաբերական ձեռնարկությունները զբոսաշրջության զարգացման ամենամեծ խոչընդոտն են:

Տուրիզմի զարգացմանը խոչընդոտող գործոններից է նաև համայնքի (հատկապես համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղական թաղամասերի և գյուղերի) ճանապարհների անբարեկարգ վիճակը:

Համայնքում զարգացման թույլ մակարդակ ունի սպասարկման ոլորտը, ինչը հերթական խոչընդոտն է՝ տարածաշրջան եկած զբոսաշրջիկին տեղում պահելու և դրա արդյունքում առաջացած ֆինանսական հոսքերը համայնքի զարգացմանն ուղղելու համար:

Ոլորտում առկա է համակարգման և շահագրգիռ կողմերի ներգրավվածության պակաս, բուն զբոսաշրջային սահմանափակ ռեսուրսներ, ինչպես նաև զբոսաշրջության վերաբերյալ տվյալների և մոնիթորինգի պակաս, ինչը շատ մեծ նշանակություն ունի ոլորտի զարգացման ավելի արագ ընթացք հաղորդելու համար:

Այս ոլորտի զարգացման գործում կարևոր է համայնքում դիվերսիֆիկացնել զբոսաշրջությունը (զբոսաշրջության նոր ուղղություններ և ապրանքների ստեղծում), զարգացնել ժամանակակից հյուրընկալության և ժամանցի ենթակառուցվածքը, բարելավել տրանսպորտի և կապի ենթակառուցվածքները, պահպանել մշակութային/պատմական հուշարձանները, ձևավորել զբոսաշրջային երթուղիներ:

Տնտեսության զարգացման գործում մեծ է կրթական համակարգի դերը: Ալավերդի համայնքում գործում են միջին մասնագիտական և բարձրագույն 3 ուսումնական հաստատություններ՝ Հյուսիսային համալսարանի «Թումանյան» մասնաճյուղը, «Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը և «Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան»:

Ուսումնական հաստատություններ

Հ/Հ	Հաստատության անվանումը	Աշխատողների քանակ	Սովորողների քանակ
1	Հյուսիսային համալսարանի «Թումանյան» մասնաճյուղ	27	138
2	«Ալավերդու պետական քոլեջ» ՊՈԱԿ	36	184
3	«Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան»	56	184

Համայնքում գործում են թվով 33 դպրոցներ (տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը).

Հ/ Հ	Հաստատության անվանումը	Աշխատ ող համայն քից	Աշխատող այլ բնակավա յրից	Սովորող ների քանակ	Դպրոցի հնարավորություն ները /աշակերտ/
1	Ալավերդու համար 1 դպրոց	30	0	129	840
2	Ալավերդու համար 2 դպրոց	44	0	359	-
3	Ալավերդու համար 4 դպրոց	29	0	132	300
4	Ալավերդու համար 5 դպրոց	24	0	96	400
5	Ալավերդու համար 7 դպրոց	31	0	125	200
6	Ալավերդու համար 8 դպրոց	23	0	81	960
7	Ալավերդու համար 9 դպրոց	24	2	105	300
8	Ալավերդու համար 10 դպրոց	22	6	80	200
9	Ալավերդու համար 11 դպրոց	23	0	56	180
10	Ալավերդու համար 12 դպրոց	72	0	682	1200
11	Աքորի գյուղի դպրոց	45	0	234	900
12	Հաղպատ գյուղի դպրոց	26	0	96	120
13	Զիլիզա գյուղի դպրոց	16	0	14	40
14	Կաճաճկուտ գյուղի դպրոց	6	3	28	90
15	Ծաղկաշատ գյուղի դպրոց	17	0	9	60
16	Շամլուղի միջնակարգ դպրոց	25	0	124	300
17	Արևածագի «Կարո Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց»	24	7	126	300
18	Այգեհատի հիմնական դպրոց	15	3	18	147
19	Քարկուփի միջնակարգ դպրոց	10	10	61	70
20	Հազվու հիմնական դպրոց	11	9	49	-
21	Ճոճկանի «Գոռ Խուդինյանի անվան միջնակարգ դպրոց»	31	1	228	360
22	Կարմիր Աղեկի հիմնական դպրոց	9	11	17	75
23	Ծաթերի հիմնական դպրոց	17	3	35	140

24	Արդվիի հիմնական դպրոց	8	14	12	115
25	Նեղոցի Ա. Բեգջանյանի անվան հիմնական դպրոց	3	16	62	150
26	Օձունի թիվ 1 դպրոց	39	3	282	900
27	Օձունի թիվ 2 դպրոց	33	1	265	280
28	Ախթալայի N 1 միջնակարգ դպրոց	20	5	142	440
29	Ախթալայի N 2 միջնակարգ դպրոց	25	0	124	250
30	Շնողի՝ Հովիկ Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց	47	3	343	343
31	Թեղուտի միջնակարգ	20	6	113	300
32	Մեծ Այրումի միջնակարգ դպրոց	14	17	107	250
33	Մղարթի հիմնական դպրոց	16	2	31	117
Ընդամենը		799	122	4365	10327

Ալավերդու համայնքապետարանի ենթակայությամբ գործում են 34 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ.

15 նախադպրոցական ուսումնական հաստատություններ,

2 երաժշտական դպրոց, որտեղ գործում են դաշնամուրի, փողային և լարային, նաև՝ ազգային նվագարանների, դուդուկի և շվիի դասարաններ,

4 մանկական արվեստի դպրոց, որտեղ գործում է դաշնամուրի, դիոլի, լարային և ազգային նվագարանների դասարաններ, վոկալի դասարան,

1 գեղարվեստի դպրոց, որտեղ գործում են քանդակագործության, կավագործության, փայտի փորագրության, գորելենի և նկարչության դասարաններ,

1 ընթշամարտի դպրոց և 1 մարզադպրոց, որտեղ անցկացվում են ընթշամարտի, ազգային կոխի, ֆուտբոլի, բասկետբոլի, հանդբոլի՝ աղջիկների և տղաների խմբակային պարապունքներ, պարբերաբար անցկացվում են համայնքային, մարզային և հանրապետական մրցաշարեր,

«Օձունի մշակույթի տուն» ՀՈԱԿ, «Շնողի մշակույթի տուն» ՀՈԱԿ, «Թեղուտի մշակույթի տուն» ՀՈԱԿ և «Ալավերդու քաղաքային համայնքի մշակութային կենտրոն» ՀՈԱԿ, որոնց ենթակայությամբ գործում են Աքորու, Ճոճկանի, Հաղպատի Ակների մշակույթի տները/ակումբները, ինը գրադարաններ, դերասանական ստուդիան, ժողգործիքների համույթը և թատրոնը,

«Օձունի գրադարանային համակարգ» ՀՈԱԿ-ը,

3 ամբուլատորիաներ՝ «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը, «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը, «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը,

2 կոմունալ սպասարկում իրականացնող ՀՈԱԿ-ներ՝ «Սխթալայի համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ և «Ալավերդու համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ:

Համայնքում գործում է նաև Միկոյան եղբայրների համայնքային թանգարանը, որը 2017թ-ին վերանորոգվել է ու համալրվել ժամանակակից և ինտերակտիվ ցուցանմուշներով:

Համայնքապետարանի ենթակայության հիմնարկների աշխատողների և երեխաների թիվը

Հ/Հ	Հաստատության անվանումը	Աշխատող	Սովորողների քանակ
1	«Ալավերդի համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ	17	35
2	«Ալավերդի համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ	23	97
3	«Ալավերդի համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ	13	24
4	«Ալավերդի համայնքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ	23	82
5	«Ալավերդի համայնքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ	13	25
6	«Ալավերդի համայնքի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ	25	97
7	«Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ	18	66
8	«Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ	13	21
9	«Ալավերդի համայնքի Աբրի գյուղի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ	15	63
10	«Ախթալա համայնքի թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ (Ախթալա և Շամլուղ)	14	44
11	«Ախթալա համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	13	31
12	«Ախթալա համայնքի Ճոճկան ՆՈՒՀ» ՀՈԱԿ	17	63
13	«Ախթալա համայնքի Մեծ Այրում» ՀՈԱԿ	9	21
14	«Օձուն համայնքի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	37	204
15	«Շնող համայնքի Հեքիաթ մանկապարտեզ» ՀՈԱԿ (Թեղուտ և Քարկոփ)	41	112
16	«Ալավերդու Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	23	116
17	«Աբրու երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	7	31
18	«Ալավերդու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ	20	103

19	«Ախթալայի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ	11	60
20	«Օձունի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ	19	142
21	«Շնողի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ	25	119
22	«Ալավերդի քաղաքային համայնքի մշակութային կենտրոն» ՀՈԱԿ	59	-
23	«Շնողի մշակույթի տուն» ՀՈԱԿ	7	-
24	«Օձունի մշակույթի տուն» ՀՈԱԿ	6	-
25	«Թեղուտի մշակույթի տուն» ՀՈԱԿ	4	-
26	«Ալավերդու քաղաքային համայնքի Ալբերտ Պապոյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ	13	78
27	«Ալավերդու քաղաքային համայնքի Օլեգ Գորբունովի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	14	100
28	«Ալավերդու ըմբշամարտի դպրոց» ՀՈԱԿ	9	95
29	«Ճոճկան բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ	6	-
30	«Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ	10	-
31	«Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ	19	-
32	«Օձունի գրադարանային համակարգ	3	-
33	«Ալավերդու համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ	73	-
34	«Ախթալա համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ	21	-

Համայնքի տարածքում գործում են առողջապահական ծառայություններ մատուցող 32 կազմակերպություններ, որոնցից «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, «Ալավերդու ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն, Ալավերդու հունական Հիպոկրատ հիմնադրամը և «Ալավերդու ախտահանման կենտրոն» ՓԲԸ-ն գտնվում են Ալավերդի քաղաքի տարածում:

Առողջության առաջնային պահպանման մեկ կենտրոն գտնվում է Աքորի գյուղի տարածքում և սպասարկում է գյուղի բնակիչներին: Կենտրոնը հագեցած է բուժսպասարկման համար անհրաժեշտ սարքավորումներով և հիմնանորոգված է: Ամբուլատորիայի շենքը գտնվում է Ծաղկաշատ գյուղի տարածքում և պատկանում է «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին: Ամբուլատորիան ունի մեկ աշխատող: 3 բուժկետներ գործում են Հաղպատ, Զիլիզա, Կաճաճկուտ գյուղերում: Զիլիզայի բուժկետը տեղակայված է համայնքապետարանի շենքում, ունի կոսմետիկ վերանորոգման կարիք, այստեղ աշխատում է մեկ բուժքույր: Հաղպատի և Կաճաճկուտի բուժկետները վերանորոգված են, ապահովված են առաջնային բուժօգնության պարագաներով և դեղորայքով: Թեղուտում գործում է բուժմանկաբարձական կենտրոն/ԲՄԿ, որը սպասարկում է «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ն, Արդվի, Այգեհատ, Հազվի և Ամոջ բնակավայրերում գործող ԲՄԿ-ների սպասարկումն իրականացնում է Օձուն բնակավայրի բժշկական ամբուլատորիան, Կարմիր Աղեկ բնակավայրի ԲՄԿ-ի սպասարկումը՝ «Արևածագի առողջության առաջնային

պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ը, Քարկոփ ԲՄԿ-ի սպասարկումը՝ Ախթալայի առողջության կենտրոնը, Մեծ Այրում բնակավայրի բժշկական ամբուլատորիայի սպասարկումը՝ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն:

Շնորհի, Ճոճկանի և Օձունի ամբուլատորիաները գործում են որպես համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ: Ճոճկանի բժշկական ամբուլատորիան կառուցվել է 2000թ-ին և ունի վերանորոգման կարիք, Օձունի բժշկական ամբուլատորիան ջեռուցման համակարգի տեղադրման կարիք ունի:

Համայնքի առողջապահական ծառայություններ մատուցող կազմակերպություններ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը
1	«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ /հիվանդանոցի շենքը 60 մահճակալի հնարավորություն ունի/
2	«Ալավերդու ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՊՓԲԸ
3	Ալավերդու հունական Հիպոկրատ հիմնադրամ
4	«Ալավերդու ախտահանման կենտրոն» ՓԲԸ
5	Առողջության առաջնային պահպանման կենտրոն
6	Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն
7	Հաղպատի առողջության առաջնային պահպանման կենտրոն
8	Ջիլիգայի առողջության առաջնային պահպանման կենտրոն
9	Կաճաճկուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն
10	Թեղուտ բնակավայրի ԲՄԿ
11	Շնորհի բժշկական ամբուլատորիա
12	Ճոճկան բնակավայրի «Բժշկական ամբուլատորիա»
13	Շնող բնակավայրի «Բժշկական ամբուլատորիա»
14	Օձուն բնակավայրի «Բժշկական ամբուլատորիա»
15	Արդվի բնակավայրի ԲՄԿ
16	Ամոջ բնակավայրի ԲՄԿ
17	Հագվի բնակավայրի ԲՄԿ
18	Այգեհատ բնակավայրի ԲՄԿ
19	Նեղոցի ԲՄԿ
20	Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն ՊՈԱԿ
21	Կարմիր Աղեկ բնակավայրի ԲՄԿ
22	Քարկոփ ԲՄԿ

23	Ախթալայի առողջության կենտրոն
24	Մեծ Այրում բնակավայրի բժշկական ամբուլատորիա
25	Մղարթի բուժամբուլատորիա
26	7 ստոմատոլոգիական բժշկական օգնություն իրականացնող հաստատություններ

Համայնքի բնակչությունը, ըստ զբաղվածության, բաժանվում է մի քանի խմբի՝ մանր և միջին առևտրով զբաղվողներ, պետական և տեղական ինքնակառավարման կառուցվածքներում աշխատողներ, գործազուրկներ, գյուղատնտեսության ոլորտում, սեզոնային շինարարություններում, հանքարդյունաբերական գործարաններում, սպասարկման ոլորտում աշխատողներ:

Համայնքում գործազուրկների հաշվառում չի իրականացվել: Գործազրկության հիմնական պատճառներն են աշխատատեղերի սակավությունը, տնտեսության զարգացման ոչ բավարար մակարդակը: Ալավերդի համայնքում մեծ է հատկապես կանանց գործազրկությունը, քանի որ համայնքում հիմնական աշխատանքային ուղղվածությունը շինարարությունը, հանքարդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն է:

Համայնքում ըստ Միասնական սոցիալական ծառայության տվյալների գրանցված են 736 գործազուրկներ, որից՝

Հ/Հ	Բնակավայրի անվանում	Գործազուրկների քանակ
1	Ալավերդի	518
2	Աքորի	48
3	Ծաղկաշատ	0
4	Կաճաճկուտ	2
5	Հաղպատ	9
6	Ջիլիզա	0
7	Ախթալա	10
8	Ճոճկան	15
9	ՄեծԱյրում	9
10	Նեղոց	2
11	Շամլուղ	2
12	Փոքր Այրում	0
13	Շնող	16
14	Թեղուտ	1
15	Քարկուփ	3
16	Ամոջ	1
17	Օձուն	53
18	Այգեհատ	3
19	Արդվի	0
20	Արևածագ	16
21	Ծաթեր	4

22	Կարմիր Աղեկ	8
23	Հագվի	3
24	Մղարթ	13
Ընդամենը		736

Զբաղվածության կենտրոնում գրանցված գործազուրկներ

Ալավերդի համայնք						
Հ/Հ	Անվանում	Ընդհանուր	Արական		Իգական	
			Մարդ	%	Մարդ	%
1	Գործազուրկների թվաքանակը, ընդամենը	736	248	34	487	66
Այդ թվում՝ ըստ կրթության						
1.1	հետրուիական, բարձրագույն	57	23	40	34	60
1.2	թերի բարձրագույն, միջին մասնագիտական	122	40	33	82	67
1.3	նախնական մասնագիտական (արհեստագործական)	119	35	29	84	71
1.4	միջնակարգ ընդհանուր	315	114	36	201	64
1.5	հիմնական ընդհանուր	118	35	30	83	70
1.6	հատուկ ընդհանուր	0	0	0	0	0

Գյուղական բնակավայրերում մեծ է գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղվածների թիվը:

Համայնքում ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների թիվը 510 է (տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը)։

Ընտանեկան նպաստի համակարգում գրանցված ընտանիքներ

Հ/Հ	Բնակավայր	Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ
1	Ալավերդի	265
2	Ախթալա	27
3	Շամլուղ	8
4	Շնող	13
5	Թեղուտ	0
6	Քարկոփ	3
7	Ճոճկան	13
8	Մեծ Այրում	24
9	Նեղոց	1
10	Հաղպատ	4
11	Ծաղկաշատ	1
12	Աքորի	52
13	Կաճաճկուտ	9
14	Զիլիզա	1
15	Հագվի	6
16	Օձուն	49
17	Ամոց	0
18	Այգեհատ	3
19	Արդվի	4
20	Մղարթ	3
21	Արևածագ	10
22	Կարմիր Աղեկ	1
23	Ծաթեր	5
24	Ակներ	8
Ընդամենը		510

Համայնքի կենսաթոշակառուների թիվը 7999 է (տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը)։

Հ/Հ	Բնակավայր	Կենսաթոշակառուների թիվ
1	Ալավերդի	3819
2	Ախթալա	515
3	Շամլուղ	162
4	Շնող	617
5	Թեղուտ	109
6	Քարկոփ	68
7	Ճոճկան	335
8	Մեծ Այրում	89

9	Փոքր Այրում	12
10	Նեղոց	30
11	Հաղպատ	161
12	Ծաղկաշատ	27
13	Աքորի	462
14	Կաճաճկուտ	42
15	Զիլիզա	19
16	Հազվի	91
17	Օձուն	987
18	Ամոջ	13
19	Այգեհատ	68
20	Արդվի	28
21	Մղարթ	80
22	Արևածագ	165
23	Կարմիր Աղեկ	20
24	Ծաթեր	80
Ընդամենը		7999

Համայնքում բազմաբնակարան շենքերի թիվը 288 է, որից 268-ը ունեն թեք տանիք, 20-ը՝ հարթ: Բազմաբնակարան շենքերի բնակարանների շուրջ 99 տոկոսը սեփականաշնորհված է: Բազմաբնակարան շենքերում բնակարանների քանակը 7125 է: Համայնքում առկա են 7312 առանձնատներ և 146 վագոն-տնակներ: Կան բազմաթիվ կիսակառույց և վթարային տներ, որոնք բնակչության սոցիալ-տնտեսական վատ վիճակի պատճառով չեն ամրացվել կամ հիմնանորոգվել:

Ալավերդի համայնքի Կաճաճկուտ գյուղի տների վթարայնության աստիճանը որոշվել է քաղաքաշինության նախարարության կողմից պատվիրված «ԳԵՈՌԻՍԿ» ընկերության կողմից 2003-2004թթ իրականացրած հետազոտությունների արդյունքում: Ըստ այդ հետազոտությունների գյուղի բնակելի տարածքը ամբողջությամբ գտնվում է սողանքային լեզվակների վրա:

Համայնքի տարածքը մասնակի է գազաֆիկացված: Մասնավորապես՝ գազաֆիկացված չեն Կաճաճկուտ, Ծաղկաշատ, Զիլիզա և Ակներ գյուղերը: Աքորի գյուղը գազաֆիկացված է 60 տոկոսով, մասնակի է գազաֆիկացված նաև Սանահին գյուղական թաղամասը: Խմելու ջուրը հասանելի է համայնքի 79 տոկոս բնակիչներին: Խմելու ջրի խնդրի առաջնահերթ լուծման կարիք ունեն Մղարթ, Նեղոց, Ծնող, Արդվի, Ծաղկաշատ, Ամոջ և Հազվի բնակավայրերը: Ոռոգվող են հողերի միայն 32 տոկոսը:

2.3. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունն ուղղակի (մասնակցային) ժողովրդավարության հիմնարար սկզբունքն է, որի նպատակն է բարձրացնել համայնքապետարանի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը՝ համայնքի բնակիչներին հնարավորություն տալով առավել ակտիվորեն մասնակցելու համայնքի կառավարմանը:

Համայնքապետարանում ներդրված «Համայնքային Կառավարման տեղեկատվական Համակարգը» (ՀԿՏՀ) հնարավորություն է տալիս ավտոմատացնել և արագացնել տեղական ինքնակառավարման աշխատատար բազմաթիվ գործընթացներ և ապահովել գույքահարկի և հողի հարկի բազաների, համայնքի բյուջեի, համայնքի ավագանու և համայնի ղեկավարի որոշումների, իրադարձությունների, նորությունների հասանելիությունը:

2023-2027 թվականներին համայնքապետարանի կողմից տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հնարավորությունների ընդլայնման նպատակով անհրաժեշտ է՝

- Բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցման նպատակով համայնքապետարանում քաղաքացիների սպասարկման և «Մեկ պատուհան» համակարգի շարունակական աշխատանք՝ օգտագործելով ՀԿՏՀ-ի ռեսուրսները:
- Հաղորդակցության ժամանակակից միջոցների կիրառում և բնակչի հետ հետադարձ կապի ապահովում՝ ապահովելով վերջինիս լիարժեք մասնակցությունը համայնքային խնդիրների լուծման գործընթացում:
- Համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով համայնքապետարանում համայնքի ղեկավարի կողմից պարբերաբար բնակչության ընդունելության կազմակերպում:
- ՀԿՏՀ-ի (<http://alaverdi.am>) հասանելիության ապահովում, ինչը հնարավորություն կտա առցանց երկխոսության՝ տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների միջև:
- Բնակչության հետ համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների և ավագանու անդամների հանդիպումների կազմակերպում:
- Կարևորագույն նշանակություն ունեցող հարցերի լուծման նպատակով հանրային քննարկումների կազմակերպում:

2.4. Աղետների ռիսկի կառավարում

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը գտնվում է բավարար վիճակում: Համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծվել է աղետների դեպքում բնակչության տարահանման հանձնաժողով: Յուրաքանչյուր տարի համայնքում ուսումնավարժական միջոցառումներ են անցկացվում: Համայնքում կազմված է «Ալավերդի համայնքի քաղաքացիական պաշտպանության» և «Երկրաշարժի հետևանքով համայնքի գործողությունների» պլանները, որոնք հաստատվել են ՀՀ Լոռու մարզպետի և ՀՀ ԱԻՆ ՓԾ-ի պետի կողմից:

Ստորև ներկայացվում է Ալավերդի համայնքին սպառնացող վտանգները, բնական կամ տեխնածին ռիսկերը և աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումները.

Սպառնացող վտանգները, բնական կամ տեխնածին ռիսկերը	Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումները
Քարաթափում, սողանք, տեղատարափ անձրև, հեղեղումներ, սելավներ, Դեբեդ գետի վարարում, երկրաշարժ, համաճարակներ	Քարաթափման տեղամասերի զննում, վտանգավոր բեկորների հեռացում, սելավատարների և հեղեղատների մաքրում, նոր սելավատարների և հեղեղատարների կառուցում, Դեբեդ գետի հունի մաքրում, սեյսմիկ վտանգի քարտեզի կազմում

2.5.2023-2027թթ.-ին հիշարժան տարեթվերի, տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ և հուշ-երեկոներ

1. Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոն
2. Տարվա լավագույն մարզիկների և մարզիչների օր
3. Հունվարի 28-ին, Հայոց բանակի կազմավորման օր
4. Տյառնընդառաջ
5. Մարտի 8, Կանանց միջազգային օր
6. Թատրոնի համաշխարհային օր
7. Ֆրանկոֆոնիայի օրեր Հայաստանում
8. Ապրիլի 7, Մայրության օր
9. Սուրբ Հարություն՝ Զատիկ
10. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր
11. Ըմբռնարտի առաջնություն
12. Հաղթանակի և Շուշիի ազատագրմանը նվիրված օր
13. Հայաստանի առաջին հանրապետության անկախության օր
14. Հունիսի 1, Երեխաների պաշտպանության միջազգային օր
15. Ոսանողական հավաք
16. Սեպտեմբերի 1, Գիտելիքի և դպրության օր
17. Հայաստանի անկախության տոն
18. Սպորտային միջոցառումներ (ազգային մարզաձևեր)
19. Հոկտեմբերի 7, Գրադարանավարի օր
20. Տարեցների միջազգային օր
21. Բերքի տոն
22. Համայնքի բնակավայրերի օրեր
23. Օլեգ Գորբունովի անվան հանդբոլի առաջնություն
24. «Համայնքապետի գավաթ» մինի ֆուտբոլի բաց առաջնություն
25. Երիտասարդության համաշխարհային օր
26. Գիրք նվիրելու օր
27. Դեկտեմբերի 7, Երկրաշարժի զոհերի հիշատակի օր
28. Ամանոր և Սուրբ Ծնունդ

2.6. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեի մուտքերի համեմատական վերլուծությունը

Համայնքի 2022թ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2023-2027թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2022թ. հաստ.	2023թ. նախ .	2024թ. կանխ.	2025թ. կանխ.	2026թ. կանխ.	2027թ. կանխ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ						
1							
2							
3							
4							
5							
6							

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի 2022թ. բյուջեի ծախսերը և 2023-2027թթ. բյուջեների ծախսերի կանխատեսումը

ա) ըստ գործառական դասակարգման

Հ/հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2022թ. հաստ.	2023թ. նախ .	2024թ. կանխ.	2025թ. կանխ.	2026թ. կանխ.	2027թ. կանխ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ						
1							
2							
3							
4							

2.7. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Ալավերդի համայնքի տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են արդյունաբերությունը, տուրիզմը, գյուղատնտեսությունը, նաև՝ փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Պետական, համայնքային, դոնոր կառույցների բյուջեների և մասնավոր ներդրումների միջոցով վերոնշյալ ոլորտների զարգացմանն ուղղված քայլեր են իրականացվում: Սակայն կան մի շարք գործոններ, որոնք խոչընդոտում են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը.

- Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների անբարեկարգ վիճակը:
- Միջբնակավայրային տրանսպորտային երթուղիների բացակայությունը, ներբնակավայրային երթուղիների սպասարկման ոչ բավարար մակարդակ

Ալավերդի համայնքի բնակավայրերի մեծ մասում չկան համայնքի կենտրոնին և միմյանց կապող երթուղիներ: Տրանսպորտի բացակայությունը սոցիալ-տնտեսական լուրջ դժվարություններ է առաջացնում բնակչության համար: Տրանսպորտի բացակայությունն իրական խոչընդոտ է ստեղծում այնպիսի իրավունքների իրացման համար, ինչպիսիք են՝ կրթության և առողջության պահպանման իրավունքները:

- Աղբահանության և սանիտարական մաքրման տեխնիկական հագեցվածության ոչ բավարար մակարդակ:
- Հակակարկտային կայանքների ոչ բավարար քանակ:
- Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը և քիչ քանակ:
- Խմելու ջրի և ոռոգման ցանցերի մաշվածություն, որոշ բնակավայրերում դրանց բացակայություն:
- Գյուղատնտեսության զարգացման համար առկա ռեսուրսների ոչ լիարժեք օգտագործում և գյուղատնտեսական բիզնեսի թերզարգացվածություն:
- Հետքերքահավաքային անհրաժեշտ գործընթացի բացակայություն, որն իր մեջ ներառում է պահեստավորումը, տեսակավորումը, վերամշակումը:
- Գյուղնթերքի շուկաների հեռու գտնվելը:
- Թույլ զարգացած սպասարկման ոլորտ:
- Համայնքային ենթակառուցվածքների, համայնքում առկա բնակֆոնդի ոչ պատշաճ վիճակ:
- Զբոսաշրջային ենթակառուցվածքների ոչ բավարար քանակ:
- Արտադրական անթափոն կամ շրջակա միջավայրի վրա նվազագույն վնասակար ազդեցություն ունեցող նոր տեխնոլոգիաների կիրառության բացակայություն:

2.8. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

S- Ուժեղ կողմեր	W- Թույլ կողմեր
• Բարձր մտավոր ներուժի առկայություն, • Պատմամշակութային հարուստ ժառանգություն, • Մարզամշակութային հարուստ ավանդույթներ, • Արդյունաբերական ենթակառուցվածքների և արտադրության կազմակերպման պատմական փորձ և ավանդույթներ, • Կենցաղային թափոնների աղբավայրերի առկայություն և այն տեսակավորելու, վերամշակելու հեռանկար, • Կրթական, առողջապահական հիմնարկների առկայություն, • Համայնքում բնականոն գործող ձեռնարկություններ, • Ակտիվ համագործակցող ՀԿ-ներ	• Ներհամայնքային ճանապարհների խիստ անբարեկարգ վիճակ • Գյուղական թաղամասերում ոռոգման ներքին ցանցի անբարեկարգ վիճակ/բացակայություն • Գյուղտեխնիկայի պակաս • Աշխատուժի շուկայում առաջարկվող աշխատատեղերի և աշխատանք փնտրողների մասնագիտական որակավորման դիսբալանս • Գործազրկության բարձր մակարդակ • Սոցիալական ծանր վիճակում գտնվող բնակչություն • Մասնավոր ձեռնարկության անբավարար ակտիվություն և փոխհամագործակցություն համայնքային հիմնախնդիրների լուծման գործում • Գյուղական բնակավայրերում սահմանափակ հասանելիություն • Ոչ բարվոք վիճակում գտնվող ենթակառուցվածքներ • Մեծ թվով երիտասարդների /աշխատուժի/ արտահոսք • Համայնքի որոշ բնակավայրերի հողերի խիստ աղտոտվածությունը ծանր մետաղներով
O - Հնարավորություններ	T- Սպառնալիքներ
• Բարենպաստ բնակլիմայական պայմաններ, • Տնտեսաաշխարհագրական բարենպաստ դիրք (Ռուսաստանի Դաշնության սահմանից մոտ 300 կմ, Սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը, Համայնքի միջով է անցնում Հանրապետության երկաթուղային հաղորդակցության գլխավոր երակը՝ Թբիլիսի-Երևան երկաթգիծը, Հանրապետության արտահանման և ներկրման	• Բնապահպանական խնդիրներ, արտադրական արտանետումների ուտիլիզացիայի բացակայություն • Դեմոգրաֆիկ անբավարար իրավիճակ և արտագաղթ • Սպասարկող կազմակերպությունների գույքային և տեխնիկական թույլ բազա, • Տիմ-մասնավոր հատված թույլ փոխգործակցություն • Հեղեղատարների անբարեկարգ վիճակ կամ դրանց խալառ բացակայություն • Համայնքի ջրահեռացման կենտրոնացված

ավտոտրանսպորտային գլխավոր՝ Թբիլիսի-Ալավերդի-Երևան մայրուղին), • Բնական պաշարներով հարուստ ընդերք, • Բազմաճյուղ և դիվերսիկացված տնտեսություն կազմակերպելու իրատեսական հեռանկար, • Զբոսաշրջիկների համար հետաքրքրություն ներկայացնող այցելության վայրեր, • Բերրի հողեր, ջրի աղբյուրներ	համակարգի (կոյուղու) անբարեկարգ վիճակ, իսկ որոշ բնակավայրերում դրանց իսպառ բացակայություն • Կեղտաջրերի մաքրման կայանի բացակայություն • Աշխարհագրական դիրքը (լեռնային տարածքին թնորոշ քարաթափման վտանգ) • Սողանքի վտանգ • Բնակֆոնդի, կոմունիկացիաների մաշվածության բարձր աստիճան
---	---

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Ալավերդի բազմաբնակավայր համայնքը կայուն և համաչափ զարգացող, բարեկարգ ենթակառուցվածքներով, մաքուր, կենսագործունեության համար գրավիչ ու հարմարավետ պայմաններով միջավայր է՝ զարգացած արդյունաբերությամբ, գյուղատնտեսությամբ և վերականգնվող էներգետիկայով: Համայնքի բնակչությանը մատուցվում են բարձրակարգ համայնքային ծառայություններ, իսկ բնակիչները չեն ցանկանում լքել իրենց համայնքը, որովհետև ունեն աշխատանք, կայուն սոցիալական պայմաններ: Կա պատասխանատու, ազատամիտ, օրինապաշտ և պահանջատեր հասարակություն, աշխույժ մարզամշակութային կյանք և ցանկալի անկյուն է զբոսաշրջիկների համար:

Սահմանված տեսլականին հասնելու համար պետական և համայնքային բյուջեների միջոցների, տեղական դոնոր կազմակերպությունների, միջազգային կառույցների և բարերարների ներդրումներով արդեն նախագծված և ակնկալվող ծրագրերի միջոցով համայնքը կունենա բարեկարգված ենթակառուցվածքներ, էլ ավելի համակարգված աղբահանություն և կոմունալ ծառայություններ, համայնքային կյանքում երիտասարդների ակտիվ մասնակցություն, զարկ կտրվի գյուղատնտեսության ու զբոսաշրջության զարգացմանը և այլն:

Համայնքի զարգացման հիմնական գրավականը պետք է լինի տնտեսության զարգացումը, այսինքն՝ արտադրության, գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացումը և աշխատատեղերի ստեղծումը՝ հատկապես տեղի հումքի վրա կազմակերպված գյուղմթերքների մշակման ողջ արժեչղթան, փոքր և միջին բիզնեսը, զբոսաշրջային ենթակառուցվածքները և այլն:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

➤ Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը.

Նպաստել համայնքում գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը՝ համայնքում գյուղտեխնիկայի բազայի ընդլայնման, ոռոգման և խմելու հին ջրագծերի հիմնանորոգման, նորերի կառուցման, համայնքում իրականացվող գյուղատնտեսության ոլորտի զարգացման ուղղված այլ ծրագրերի աջակցման միջոցով:

➤ Խթանել զբոսաշրջության զարգացումը.

Ապահովել զբոսաշրջության զարգացումը՝ համայնքում զբոսաշրջային համեմատական առավելությունների բացահայտման և առևտրայնացման, զբոսաշրջային ենթակառուցվածքների բարեկարգման, նորերի ստեղծման, գյուղերը զբոսաշրջային տեսանկյունից ավելի գրավիչ դարձնելու, զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և անհատների հետ համագործակցության միջոցով:

➤ Ակտիվացնել համայնքում մարզական կյանքը, խրախուսել առողջ ապրելակերպը և ֆիզիկական կուլտուրան.

Խթանել առողջ ապրելակերպը, ֆիզկուլտուրան և սպորտը՝ վերանորոգելով մարզադպրոցները, կառուցելով նորերը, կազմակերպելով տարբեր մարզաձևերի

մրցաշարեր, համայնքի տարբեր թաղամասերում և մի շարք գյուղերում կառուցելով քայլուղիներ, խաղահրապարակներ, խաղադաշտեր, տեղադրել մարզասարքեր և այլն:

➤ **Ապահովել համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայությունների մատուցումը.**

Ապահովել նախադպրոցական տարիքի բոլոր երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ ավելացնելով խմբասենյակների թիվը, նորոգելով մանկապարտեզները և ստեղծելով հնարավորություններ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

Շարունակել արտադպրոցական և նախադպրոցական կրթության որակի բարելավումը՝ վերապատրաստումներ ու մասնագիտական փորձի փոխանակումներ կազմակերպելու, ուսումնական հաստատությունների նորոգման միջոցով:

➤ **Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել մշակութային միջոցառումներին երիտասարդների ակտիվ մասնակցությունը.**

Պահպանել, զարգացնել և ապահովել մշակութային ավանդույթների ընդգրկվածությունը՝ մշակութային օջախների բարեկարգման և վերազինման, փառատոնների և միջոցառումների կազմակերպմանն աջակցելու, մշակույթը ներկայանալի դարձնելու միջոցով:

Թանգարանների և գրադարանների հետ կապն աշխուժացնելու և ավելի ամրապնդելու նպատակով համալրել գործող թանգարանների թանգարանային ֆոնդը, ստեղծել գրադարանային գրավիչ միջավայր և համալրել գրադարանների գրքային ֆոնդը:

➤ **Ապահովել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը.**

Ապահովել բնակիչների ավելի բարեկեցիկ կյանքը՝ համայնքային սոցիալական աշխատանքի խթանման միջոցով առավել խոցելի ընտանիքների կարիքներին արձագանքման, խոցելի ընտանիքների հասցեական և թիրախավորված աջակցության, խոցելի ընտանիքների տնտեսական դիմակայունության բարձրացման (գյուղական համայնքերում անասնապահություն, ջերմոցային տնտեսությունների ստեղծում և մասնագիտական կարողությունների զարգացում), հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի մատչելիությանը նպաստող հարմարեցումների ստեղծման, սոցիալական ոլորտի գործընկերների հետ համատեղ սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման միջոցով:

➤ **Համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի անխափան և բնակիչների համար հարմարավետ կազմակերպում.**

Ապահովել ներբնակավայրային և միջբնակավայրային հանրային տրանսպորտի հասանելիությունը և բնականոն աշխատանքը՝ նոր ու հարմարավետ տրանսպորտային միջոցների ձեռքբերման, երթուղիների մշակման, կանգառների վերանորոգման և նորերի կառուցման միջոցով:

➤ **Բարելավել աղբահանության, սանիտարական մաքրման, կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծառայությունները.**

Բարելավել համայնքի արտաքին տեսքը՝ կանաչ գոտիների, ծաղկապատ տարածքների ընդլայնմանն ուղղված աշխատանքներ իրականացնելու միջոցով:

Շարունակել համայնքի բնակավայրերում ապահովել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների բնականոն մատուցումը, համալրել կոմունալ ծառայության ավտոպարկը բազմաֆունկցիոնալ մեքենաներով, կառուցել ավտոպարկ/ավտոտնակ:

Համայնքի բնակիչների անվտանգ տեղաշարժն ապահովելու և հիվանդությունների տարածումը կանխարգելելու նպատակով վնասազերծել թափառող կենդանիներին:

- ✓ **Համայնքի բնակավայրերի կառուցապատում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում, բարելավում և շահագործում, համայնքային գույքի կառավարում.**

Ապահովել համայնքի բարեկարգ տեսքը՝ խաղաղաշտեր, խաղահրապարակներ, մարզահրապարակներ ու հանգստի գոտիներ նորոգելով և հիմնելով, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններ, մշակույթի տներ, գրադարաններ, համայնքային շենքեր, բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքեր, միջանցքներ, տանիքներ, վերելակներ հիմնանորոգելով, մայթեր, հենապատեր, աստիճաններ, աստիճանահարթակներ, կամուրջներ վերանորոգելով, մի շարք գյուղական բնակավայրերի խմելու ջրի մատակարարումն ապահովելով, ջրամատակարարման որակը բարձրացնելով, խմելու ջրագծերը վերանորոգելով, մի շարք գյուղերի ոռոգման ցանցեր նորոգելով և նորերը հիմնելով, նորոգելով, ցանկապատելով համայնքային գերեզմանատները, ընդլայնելով և արդիականացնելով լուսավորության համակարգը և այլն:

- ✓ **Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում.**

Բարելավել գործարար միջավայրը և խթանել ձեռնարկատիրությունը՝ գործարարների համար վստահելի ներդրումային միջավայր ստեղծելու միջոցով:

- ✓ **Բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկման որակը.**

Ապահովել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկման որակի բարձրացում՝ հողի հարկի, գույքահարկի բազաների ճշտումների, համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների աշխատակիցների որակավորման բարձրացման միջոցով:

Նշված նպատակների իրականացնելուն ուղղված ծրագրերի համար կազմվել են ծրագրերի անձնագրեր:

3.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

Հանրապետական և մարզային ծրագրեր

1. Ալավերդու համար 2 և համար 8 դպրոցների քանդում և նորի կառուցում: Կառուցումից հետո շուրջ 440 աշակերտները ժամանակակից չափորոշիչներին համապատասխան կրթական միջավայր կունենան:
2. Ալավերդու համար 12 դպրոցի մարզադահլիճի խնդիրը տարիներ շարունակ մնում էր չլուծված: Առաջիկա տարիներին նախատեսվում է վերանորոգել դպրոցի սպորտդահլիճը:
3. Արդվի բնակավայրում խմելու ջրագծի անցկացում և ոռոգման ՕԿՋ-ի կառուցում:
4. 2016 թվականից մեկնարկել է Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական (Մ-6) ճանապարհի շուրջ 90 կմ երկարությամբ հիմնական տարանցիկ մայրուղու հիմնանորոգման և վերակառուցման ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Ալավերդի քաղաքի տարածքում հիմնանորոգվել է միջպետական ճանապարհ, առաջիկա տարիներին նախատեսվում է ավարտին հասցնել շինարարությունը՝ վերանորոգելով 0,5 կմ ճանապարհահատվածը:

Ճանապարհի հիմնանորոգումը կնպաստի տնտեսության, մասնավորապես զբոսաշրջության զարգացմանը:

5. Ալավերդի համայնքի Թումանյան փողոցից մինչև Սանահին Սարահարթ, Սանահին գյուղական թաղամաս և Ակներ գյուղ տանող 1,114 կմ երկարությամբ ճանապարհահատվածի վերանորոգում: Ճանապարհը գտնվում է խիստ անբարեկարգ վիճակում, ինչը անհարմարություններ է ստեղծում ոչ միայն տեղի վարորդների, այլև համայնք այցելող զբոսաշրջիկների համար: Այս ճանապարհը կարևոր նշանակություն ունի համայնքի համար զբոսաշրջային այցեքարտ դարձած պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող Սանահինի Վանական համալիր տանող միակ երթուղին լինելու առումով: Ճանապարհաշինական այս ծրագրով նախատեսվում է նաև ճանապարհին հարակից հենապատերի նորոգում, ջրահեռացման համակարգի անցկացում, վտանգավոր ժայռերի քարաթափում:

Միջհամայնքային ծրագրեր

Մի շարք համայնքների հետ նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- համագործակցող կողմերի փոխադարձ այցերի կազմակերպում,
- մարզամշակութային ծրագրերի ու միջոցառումների իրականացում,
- փորձի փոխանակում,
- վարպետության դասընթացների կազմակերպում

Թումանյան համայնքի հետ իրականացվում է «աղբահանության կազմակերպում և տեղափոխում Ալավերդի համայնքի ենթակայության տակ գտնվող լիցենզավորված աղբավայր» ծրագիրը:

Այլ ծրագրեր և միջոցառումներ

- 500 կՎտ հզորությամբ համայնքային արևային կայանի կառուցում՝ տարեկան մոտ 650 ՄՎտժ էլեկտրաէներգիայի արտադրությամբ: Ծրագրի իրականացման դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կլինի էական՝ տարեկան մոտ 270 տոննա CO2 արտանետումների կրճատում:
- Շուրջ 2 կմ համայնքային փողոցների լուսավորության համակարգերի արդիականացում՝ լուսադիոդային լուսատուների տեղադրման միջոցով, ինչը կհանգեցնի տարեկան մոտ 30 ՄՎտժ էներգիայի խնայողության և 12 տոննայով CO2 արտանետումների կրճատման:
- Ալավերդի համայնքի Ալավերդի, Օձուն, Շնող և դրանց հարակից բնակավայրերի պատանիների համար հասանելի դարձնել Թումոյի կրթական ծրագիրը՝ Ալավերդի, Օձուն, Շնող բնակավայրերում Թումո տուփերի կառուցման մջոցով:
- Համայնքում տարբեր տարիքային և սոցիալական խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության և սպորտով զբաղվելու մատչելիությունը ապահովելու, ինչպես նաև ժամանցի, ակտիվ հանգստի կազմակերպման նպատակով, նախատեսվում է դոնոր կազմակերպությունների հետ համատեղ համայնքում զարգացնել Street Workout մարզաձևը: Մասնավորապես համայնքի տարբեր թաղամասերում և բնակավայրերում նախատեսվում է կառուցել 10 Street Workout մարզաձևով զբաղվելու հարթակներ:

Համայնքապետարանի, ՀՀ Կառավարության, դոնոր կառույցների, ՀԿ-ների և այլ կառույցների համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր և միջոցառումներ

1. Ալավերդի համայնքի ճանապարհների կապիտալ վերանորոգում
2. Ալավերդի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում՝ շենքերի մասնակի ջերմաարդիականացմամբ
3. Ոռոգման ջրագծերի վերանորոգում/կառուցում
4. Խմելու ջրագծերի վերանորոգում/կառուցում
5. ՕԿՋ-ների կառուցում
6. Ալավերդի համայնքի համայնքապատկան շենքերի (վարչական շենքեր, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների, մշակույթի տների, գրադարանների, բուժամբուլատորիաների շենքերի) վերանորոգում և կահավորում
7. Ալավերդի համայնքում հենապատերի վերանորոգում և հենապատերի թափված քարերի վերականգնում
8. Ալավերդի համայնքի հեղեղատարների մաքրում
9. Մի շարք բնակավայրերի գազաֆիկացում
10. Համայնքի փողոցային լուսատուների և լուսասյուների նորոգում ու արդիականացում
11. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների լավարկում՝ աղբամանների և աղբատարների ձեռքբերման միջոցով
12. Ալավերդի համայնքի աստիճանների և աստիճանահարթակների վերականգնում
13. Ալավերդի համայնքում գերեզմանատների տարածքների ցանկապատում և նոր գերեզմանատան կառուցում
14. Միջբնակավայրային և ներբնակավայրային հասարակական կանոնավոր տրանսպորտային համակարգի ներդրում
15. Մանավոր-համայնք համագործակցությամբ համայնքի ճոպանուղու վերանորոգում և վերագործարկում
16. Ալավերդի համայնքում կանաչապատ տարածքների վերականգնում, ընդլայնում և բարեկարգում և զբոսայգիների կառուցում
17. Ալավերդի համայնքի տարածքում մարզահրապարակների և խաղահրապարակների կառուցում
18. Ալավերդի համայնքի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի ժամանակավոր լուկալիզացիա
19. Ալավերդի համայնքում վերելակների վերանորոգում
20. Հակակարկտային կայանների ձեռքբերում և տեղադրում
21. Ալավերդի համայնքի տարածքում շուկայի կառուցում
22. Ալավերդի համայնքի գծանցի կամուրջի վերանորոգում
23. Ալավերդի համայնքի մայրերի վերանորոգում
24. Ալավերդի համայնքի հեղեղատարների վերանորոգում
